2 ՆՈՅԵՄԲԵՐ 2013 ՇԱԲԱԹ 189(5272)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

## Հայաստանի բնակչությունը նվազել է այս տարվա 9 ամիսներին

Ազգային վիճակագրական ծառայության հոկտեմբերի 31-ին հրապարակած ցուցանիշների համաձայն՝ 2013-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի մշտական բնակչությունը տարեսկզբի՝ հունվարի 1-ի համեմատ նվազել է 10 հազարով եւ կազմել 3 մլն 17 հազար մարդ: Դա տեղի է ունեցել միգրացիայի բացասական մնացորդի պատճառով, որը գերազանցել է բնական աճի ցուցանիշին: Նվազել է նաեւ ծնելիության գործակիցը՝ այս տարվա հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 1,9 տոկոսով:

Ինչ վերաբերում է երկրից մեկնողների եւ ժամանողների տարբերությանը, ապա մոտ 996 հազար ՀՀ քաղաքացիներ մուտք են գործել երկիր, իսկ 1 մլն 118 հազարն էլ մեկնել են երկրից: Բացասական հաշվեկշիռը կազմել է 122 հազար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բացասական հաշվեկշիռը կազմել էր 109 հազար: Այսինքն՝ այս տարվա 9 ամիսներին բացասական հաշվեկշիռը խորացել է 13 հազարով: Իհարկե, տարեկան արդյունքներով միայն կարելի է վերջնական դատողություններ անել արտագաղթի ծավալների մասին, քանի որ այստեղ կան սեզոնային եւ այլ գործոններ, բայց, ցավով պետք է նշել, Հայաստանը լքողների թիվն այս պահին ավելացել է:

Ա. Ս.

## Նավը ծանծաղուտում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Այնպիսի զգացողություն է, թե բոլորը մի տեսակ սպասում են ինչ-որ բանի: Մինչ երկրի ղեկավարությունը տարուբերվում է եվրոպական ու ռուսական՝ մեջընդմեջ փչող քամիներից, որոնք ռուս եւ եվրոպական պաշտոնյաների այցերից ու տարբեր առիթներով բարձրաձայնումներից են ծագում, քամու համապատասխան չափաբաժիններով, մյուսները ձեռքերը կախ են գցել: Ժողովրդով, պատկերացրեք: Ոչ ոք չի պատկերացնում, թե արդեն եկող տարի ի՞նչ է սպասում Հայաստանին, ինչ ձեռնարկի, մնա՞, գնա՞, ի՞նչ է լինելու Վիլնյուսի գագաթնաժողովում, ի՞նչ է լինելու Մաքսային միությանը Հայաստանի անդամակցությունից հետո (եթե, իհարկե, անդամակցի): Այն մարդիկ, որ հակված էին սովորաբար Ռուսաստան մեկնելու արտագնա աշխատանքի, այժմ երկու հակոտնյա տրամադրությամբ են վարակված: Մի մասն ասում է՝ էլ ինչ գնանք, եթե այստեղ էլ նույն բանն է լինելու, մյուսները, գուցե ավելի գերակշիռ մաս կազմողները, հակառակը, նշում են, որ եթե Մաքսային միության մաս ենք կազմելու, ինչո՞ւ մնալ ռեսուրս չունեցող, եղած ռեսուրսները մեջմեջ եղած Հայաստանում, եթե կարելի է Մաքսային միության մի այլ՝ առավել օրենքները գործող եւ ռեսուրսառատ երկրում հաց վաստակել, ավելի լավ է մեկնել, այստեղ հնարավոր չէ վաստակել: Այսինքն՝ պաշտոնական ու ոչ պաշտոնական հիմնավորումները, նամակներն ու հականամակները մի կողմ՝ ՄՄ մտնելու որոշումը, որքան էլ հիմա չուզենանք տեսնել, կարող է արտագաղթի նոր ալիքի պատճառ դառնալ, քանի որ մարդիկ կմտածեն՝ եթե նույն տարածքն է, ինչ տարբերություն՝ այստեղ ենք, թե այնտեղ, մանավանդ՝ այնտեղ հնարավորությունները մեծ են, եւ այնքան չեն փակված ճեղքերը, որքան Հայաստանում:

Ընտրական շրջանում խոստացված փոփոխությունները, փաստորեն, գրվեցին սառույցին՝ եվրոռուսական այս նոր թնջուկի ֆոնին: Այս պահին Հայաստանում արվող բոլոր պաշտոնափոխությունները կոնյունկտուրայի մեջ են, եւ ոչ թե՝ ինչ-որ բան արմատապես փոխելու կամ կոռուպցիայի նվազեցմանն ուղղված, ինչպես որ ավելի վաղ էր խոստացվում:

Տես էջ 2

## Դատարկ աթոռներ՝ պետդեպարտամենտից

Haqqin.az-ը, հղում անելով այսպես կոչված «Ամերիկա-Ադրբեջան ալյանսի» տարածած մամլո հաղորդագրությանը, տեղեկացնում է, որ նախօրեին Վաշինգտոնի հեղինակավոր սրահներից մեկում կազմակերպվել է «ճոխ խնջույք»: Միջոցառման հովանավորը եղել է Ադրբեջանի տրանսպորտի նախարարի որդին՝ Անար Մամեդովը, որը Միացյալ Նահանգներում ունի «հաջողակ գործարարի» համարում:

Խնջույքը նախատեսված է եղել 600 հրավիրյալի համար: Ընդ որում, դա երկրորդ նման միջոցառումն է: Կազմակերպիչը հետապնդել է Ադրբեջանի նախագահական «ընտրությունների» առթիվ ԱՄՆ քաղաքական շրջանակներում իշխող հիասթափությունը մեղմելու նպատակ:

Ավելի պարզ ասած, ադրբեջանցի օլիգարխ պաշտոնյայի որդին Վաշինգտոնում «հացի սեղան» է պատրաստել, որին հրավիրել է սենատորների, կոնգրեսականների եւ պետդեպարտամենտի ներկայացուցիչների, որպեսզի ամերիկացիներին շլացնի ադրբեջանական «ազգային հյուրասիրության եւ սրտաբացության ավանդույթներով»: Հետաքրքրական է, որ միջոցառման կազմակերպմանը ներգրավվել եւ խնջույքին մասնակցել է ԱՄՆ-ում Ադրբեջանի դեսպան Էլին Սուլեյմանովը:

Տես էջ 2

## Ներդրումները Հայաստանում նվազում են

### *Խոշոր ներդնողներին պետք չէ «խրտնեցնել»*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Թեեւ Հայաստանը շարունակում է բարելավել իր ցուցանիշը Համաշխարհային բանկի բիզնես վարելու դյուրինության (Doing Business) ցուցանիշով, այդուհանդերձ, մեր երկրի ներդրումային գրավչությունը վերջին տարիներին փոփոխական լինելով, ի վերջո, նվազման միտում է ունեցել: 2009-ից մինչեւ 2013-ի առաջին կեսի իրական հատվածում կատարված ներդրումների ցուցանիշներն այսպիսին են եղել.

2009 թ.՝ 935 մլն դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 732 մլն դոլար

2010 թ.՝ 702 մլն դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 482 մլն դոլար

2011 թ.՝ 816 մլն դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 631 մլն դոլար

2012 թ.՝ 751 մլն դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 567 մլն դոլար

2013 թ. հունվար-հունիս՝ 293 մլն դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 118 մլն դոլար

Ինչպես տեսնում ենք, 2009-ից հետո ներդրումները նվազել են, բացառությամբ 2011 թվականի: Այս տարիներին Հայաստանում ամենախոշոր օտարերկրյա ներդնող երկիրը եղել է եւ շարունակում է մնալ Ռուսաստանը: Բավական է նշել միայն գազի ոլորտում հարյուրմիլիոնավոր դոլարների հասնող «Հայռուսգազարդի» ներդրումները: Այս երկիրը 2009-ին Հայաստանում ներդրել էր 502 մլն դոլար, իսկ այս տարվա առաջին կեսին այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 38 մլն դոլար:

Երկրորդ խոշոր ներդնողը Ֆրանսիան է, որի կատարած ներդրումները հիմնականում հեռահաղորդակցության եւ խմիչքի (կոնյակ) արտադրության ոլորտներում են եղել: Այս դեպքում նույնպես ներդրումները նվազել են՝ 2009-ին՝ 197 մլն դոլարից մինչեւ 2013-ի հունվար-հունիսին՝ մոտ 29 մլն դոլար:

Երրորդ խոշոր ներդնողը մեր երկրում հոլանդացիներն են, թեեւ այստեղ ուղղակի ներդրումներն աննշան են, հիմնականում աջակցություն է տարբեր ծրագրերի: Այս երկրից 2009-ին Հայաստանում կատարվել էր 71 մլն դոլարի ներդրում, իսկ այս տարի ընդհանրապես ներդրումներ չկան:

Գերմանական կապիտալը Հայաստանում կատարված ներդրումներով չորրորդն է: Հանքարդյունաբերության ոլորտում գերմանական «Քրոնիմետ» ընկերության ներդրումների ծավալները փոփոխական են եղել անցած տարիների ընթացքում եւ 2013-ի առաջին կեսին կազմել են 12 մլն դոլար:

Տես էջ 3

## Քերրին խոստովանեց, որ լրտեսման ամերիկյան ծրագիրը չափից դուրս ծավալուն էր

### *ԱՄՆ-ի եւ ՀԲ-ի գաղտնալսումները դադարեցվել են*

ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերրին առաջին անգամ պաշտոնապես խոստովանել է, որ լրտեսման ամերիկյան ծրագրի ծավալները «չափից շատ» լայնընդգրկուն են եղել: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Վաշինգտոնում Քերրին մասնավորապես ասել է. «Այո, որոշ դեպքերում լրտեսման ծրագիրը չափազանց հեռու է գնացել»: Միեւնույն ժամանակ նա հավաստիացրել է, որ լրտեսումն անհրաժեշտ է եղել, իսկ «անմեղ մարդիկ» դրանից չեն տուժել: Պետքարտուղարը նաեւ հայտարարել է, որ ԱՄՆ-ի հատուկ ծառայություններն այլեւս չեն իրականացնի այնպիսի լրտեսություն, որը զայրացնում է մերձավոր դաշնակիցներին, մասնավորապես Գերմանիային:



CNN հեռուստաալիքը հաղորդում է, որ Կոնգրեսում սկսել են նախապատրաստել գաղտնալսումների սկանդալի կենտրոնում հայտնված ԱԱԳ-ի լիազորությունները սահմանափակող օրինագիծ: Փոփոխությունները, սակայն, լինելու են շատ սահմանափակ եւ վերաբերվելու են հատուկ ծառայության այն գործողություններին, որոնք կապված են ամերիկացիների, այլ ոչ թե օտարերկրացիների հետ:

Տարբեր երկրներ շարունակում են ԱՄՆ-ից բացատրություն պահանջել լրտեսման ծրագրի առնչությամբ: Այսպես, Չինաստանը ամերիկացիներին կոչ է անում իր տարածքից դուրս բերել հատուկ ծառայությունների գործակալներին: Ավելի վաղ ԱԱԳ-ի գործունեությանը վերաբերող մի հրապարակումից պարզվել էր, որ Արեւելյան Ասիայում ԱՄՆ-ը ամենից շատ լրտեսական կենտրոններ ունի Չինաստանի տարածքում: Դրանք կազմակերպված են դեսպանությունների հիմքի վրա, մասնավորապես՝ Պեկինում:

Հոկտեմբերի վերջերին ԱՄՆ-ից բացատրություններ էին պահանջել Ֆրանսիան, Գերմանիան եւ Իսպանիան, որոնք լրտեսվել էին ինչպես շարքային քաղաքացիների, այնպես էլ ղեկավարների մակարդակով:

Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ նախագահ Բարաք Օբաման կարգադրել է դադարեցնել Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) եւ Համաշխարհային բանկի (ՀԲ) վաշինգտոնյան կենտրոնակայանների գաղտնալսումները: Գործակալության «լավատեղյակ աղբյուրի» տվյալներով, ԱՄՀ-ի եւ ՀԲ-ի լրտեսումը դադարեցվել է ՄԱԿ-ի կենտրոնակայանի գաղտնալսումների դադարեցման հետ միաժամանակ՝ հոկտեմբերի սկզբներին, բայց լրատվամիջոցներին դա հայտնի է դառնում միայն հիմա:

Պ. Ք.

ԱԶԳ

## Ընթացիկ

# Գերմանիան, որպես իրական բարեկամ, շարունակելու է աջակցել Հայաստանի զարգացմանը



Արեւելյան գործընկերության վիլնյուսյան գագաթաժողովին ընդառաջ Հայաստանը, ի դեմս արտաքին գործերի նախարարի, փորձում է հասկանալ, թե ինչ տրամադրվածությամբ ու ինչ մոտեցումներով կարող են Եվրամիության անդամ երկրների ներկայացուցիչները հանդես գալ գագաթաժողովում: Ասոցիացման համաձայնագիր չստորագրելու ֆոնին որեւէ փաստաթուղթ ստորագրելու Հայաստանի ցանկությունն, ըստ էության, կարող է իրականություն դառնալ, եթե անդամ երկրները ակտիվ ու արագացված մասնակցություն ունենան այդ գործընթացում, քանի որ ԵՄ բոլոր փաստաթղթերը կարիք ու պարտադրանք ունեն անդամ երկրների հավանության:

Այսինքն՝ Հայաստանի հետ որեւէ փաստաթուղթ ստորագրելու հավանականությունը կարող է ու թերեւս քննարկվում է արտերկրյա այցելությունների ժամանակ, ընդ որում՝ որեւէ փաստաթղթի տեքստի վրա աշխատանքը եւս ընթանում է անդամ երկրների հետ համատեղությամբ: Փաստացի, Հայաստանի արտգործնախարարը «հող» է շոշափում տարբեր եվրոպական երկրներում, որտեղ վերջին շրջանում լինում է զգալի հաճախականությամբ:

Հոկտեմբերի 31-ին էլ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը աշխատանքային այցով Բեռլինում էր: Հաշվի առնելով, որ Գերմանիան ԵՄ որոշումների կայացման հարցում կարեւոր խաղացողներից է, կարեւոր էր նաեւ այս այցելությունը:

Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է ունեցել իր գերմանացի գործընկերոջ՝ Գերմանիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Գիդո Վեստերվելեի հետ:

Ողջունելով Էդվարդ Նալբանդյանին՝ **Գիդո Վեստերվելեն** նշել է, որ Հայաստանը եւ Գերմանիան գերազանց փոխհարաբերություններ ունեն, եւ ընդգծել է, որ համատեղ արդյունավետ աշխատանքի շնորհիվ այսօր տարբեր բնագավառներում երկկողմ համագործակցությունը բարձր մակարդակի վրա է: «Գերմանիան, որպես իրական բարեկամ, շարունակելու է աջակցել Հայաստանի զարգացմանը», ընդգծել է նախարար Վեստերվելեն:

Նախարարները վստահություն են հայտնել, որ համատեղ հետեւողական ջանքերի շնորհիվ երկկողմ հարաբերությունները առավել կզարգանան եւ կընդլայնվեն:

Գերմանիայի ԱԳ նախարարի խնդրանքով նախարար **Նալբանդյանը** ներկայացրել է ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վերջին զարգացումները, այդ ուղղությամբ Հայաստանի եւ միջազգային հանրության կողմից ձեռնարկվող ջանքերը:

Նախարարներն անդրադարձել են Հայաստան-Եվրոպական միություն հարաբերություններին, «Արեւելյան գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում համագործակցությանը, քննարկել Վիլնյուսի գագաթաժողովին առնչվող հարցեր:

Նույն օրը Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է նաեւ Գերմանիայի վարչապետ Անգելա Մերկելի արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով գլխավոր խորհրդական Քրիստոֆ Հոյսգենի հետ, քննարկել են Հայաստան- Եվրոպական միություն համագործակցությունը, Վիլնյուսի գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքները:

Վ. Պ.

# Ճապոնիան ծրագրում է դեսպանատուն բացել Հայաստանում

Երեւանում Ճապոնիայի դեսպանատան բացման հարցը դեռեւս լուծված չէ: Այս մասին երեկ լրագրողներին տեղեկացրել է Ճապոնիայի դեսպանության լիազորված համակարգող Արիհիկո Հասեգավան:

Ներկայումս Ճապոնիայի դեսպանատունը գործում է Ռուսաստանում եւ համատեղությամբ՝ Հայաստանում, իսկ նստավայրը Մոսկվայում է:

Արիհիկո Հասեգավան նշել է, որ Ճապոնիայի արտաքին գործերի նախարարությունը դեսպանատներ բացելու հայտ է ներկայացրել վեց երկրների, այդ թվում՝ Հայաստանին: Առայժմ հայտնի չէ՝ կառավարությունը կհաստատի՞ հայտը:

Ճապոնիան ծրագրում է դեսպանատներ բացել Հայաստանում, Թուրքմենստանում, Բութանում, Նամիբիայում, Մարշալյան կղզիների հանրապետությունում եւ Բարբադոսում:

Ի. Պ.

# Դատարկ աթոռներ՝ պետդեպարտամենտից

*1-ին էջից*

Ըստ հաղորդագրության, խնջույքի հրավերն ընդունել են սենատորներ Ռիչարդ Բարը, Սաքսի Քեմբլիսը, Ռոջեր Ուիքերը, Թեդ Կոգանը, The Washington Times-ի եւ The Washington Diplomat-ի խմբագիրներ Լարի Բիսլին եւ Վիկտոր Ջիբլին:

Փաստացի միջոցառումը տապալվել է, քանի որ ԱՄՆ պետական դեպարտամենտը պարզապես այն մատնել է անուշադրության: Այլ կերպ չէր էլ կարող լինել. Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական գերատեսչությունը չէր կարող Ադրբեջանի նախագահական «ընտրությունները» խիստ քննադատել, բայց իր ներկայացուցիչներին ուղարկել իլհամալիեւյան վարչախմբի կազմակերպած խնջույքին:

Թերեւս դա է պատճառը, որ երեկ Բաքվում իշխող վարչախումբը նոր հարձակում է սկսել ԱՄՆ կառավարության աջակցությունը վայելող Ազգային ժողովրդավարական ինստիտուտի դեմ: Ադրբեջանի դատախազության հատուկ կարեւորության գործերով վարչությունը քրեական գործ է հարուցել Բաքվի ընտրությունների դիտարկման կենտրոնի դեմ: Մեղադրանքը հենվում է ԱՄՆ-ից այդ հաստատությանը տրված դրամաշնորհը «ոչ նպատակային, այն է՝ Ադրբեջանում զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով օգտագործելու մասին ստացված ահազանգի վրա»:

Կատարվել է խուզարկություն, Ընտրությունների դիտարկման կենտրոնի փաստաթղթերը, համակարգչային տեխնիկան, կապի միջոցներն առգրավվել են: Գործով ձերբակալվածներ առայժմ չկան:

Վ. Ա.

ԻՐԱՎԻՃԱԿ

# Նավը ծանծաղուտում

*1-ին էջից*

Տպավորություն է, որ երկրի ղեկավարներն այնքան եւ այն աստիճան խորն են տարված ԵՄ-ՄՄ խաղով, որ երկրի կենսագործունեության բարելավման ուղղությամբ պարզապես չեն հասցնում մտածել:

Օդում են մնացել մենաշնորհները կամ օլիգարխիզացիան զսպելու, օրենքի առաջ բոլորի հավասարությունն ապահովելու, գլոբալ աշխատատեղեր ստեղծելու խոստումները, անգամ ստվերը նոր բյուջետային տարում չեն պատրաստվում կրճատել՝ չնեղելու համար բիզնես միջավայրը: Սակայն ժողովուրդը սպասում էր, որ ի վերջո քայլեր կարվեն ռեսուրսների այդքան մեծ կենտրոնացումը մի խումբ անձանց ձեռքում մի փոքր ապակենտրոնացնելու, արհեստականորեն, հովանավորյալներին միայն ուղղվող երկրի կենսատու երակների՝ ավելի լայն շերտերի ուղղորդելու առումով, քանի որ ներկա բարքերը փակել են սովորական հայի ճանապարհը մի գործ սկսելու, մի ինչ- որ միջին եկամտի աղբյուր գտնելու, ընտանիքի բարեկեցությունն ապահովելու համար: Շուկաները փակող եւ այնտեղ սեփական այգու բարիքը վաճառող մարդուն դուրս մղող «Երեւան- սիթիներին» զարկ տալով մի՞թե սովորական հայ մարդը կապրի, եւ ո՞ւմ է պետք այդ տիպի «քաղաքակիրթ» առեւտուրը, որի դեպքում 300-դրամանոց խաղողը վեցհարյուր դրամ է, 200-դրամանոց խնձորը՝ ութհարյուր դրամ, եւ ինչո՞ւ հասարակ այգեպանն իր բերքը սիթիներին հանձնի ջրի գնով, իսկ մեկ-երկու տարի այդպես անելուց հետո՝ վաճառի եղած-չեղածն ու հայդե՝ Ռուսաստան: Կամ ինչո՞ւ փակել բոլոր երկրներում եւ բոլոր ժամանակներում աղքատ մարդուն կերակրող շուկաները (Փակ շուկան, Էրեբունի շուկան եւ այլն)՝ երեսպաշտական պատճառաբանություններով, եւ տեղը մեծ ու անխիղճ սուպերմարկետներ կառուցել, որտեղ, հազար անգամ աչքովս եմ տեսել, թե ինչպես խանութների անվտանգության աշխատակիցները հին շորերով մարդկանց չեն թողնում ներս, քանի որ հավանաբար ենթադրում են, որ այդ դասի մարդը գրպանում անգամ այդ տեսակ խանութից հաց գնելու փող չի ունենա:

Հիմա էլ, փոխանակ նախընտրական խոստումները իշխանավորները մեկ-մեկ իրականություն դարձնեն, արդարանում են սպասումով՝ ՄՄ, թե՞ ԵՄ: Կարծես մի մեծ պահմտոցի է սկսվել՝ մեր շատ իշխանավորներ պահ են մտել ու սպասում են. որքան ուշ հայտնաբերվեն ու «թքվեն», էնքան ավելի պարզ կլինի՝ ՄՄ, թե՞ ԵՄ: Էն որ թեւերդ իջեցրած կանգնում ես, քանի որ չգիտես՝ վաղն ինչ է լինելու: ԵՄ-ՄՄ, սա արդեն բառախաղ է, քանի որ ՄՄ հարցերով վերջին Մինսկյան գագաթաժողովից հետո Հայաստանի ՄՄ մտնելն այլեւս այնքան անամպ չի թվում՝ ադրբեջանական ծագմամբ ռուսական հայտնի հաղորդավարուհու, Բելառուսի եւ Ղազախստանի նախագահների տված խաղերից հետո: Մեր իշխանական կուլիսներում մի կասակ-սպառնալիք է պտտվում, թե՝ թող շատ երես չառնեն, կվերցնենք ու հետ կդառնանք ԵՄ՝ այդպիսով կասակով, թե լուրջ Ասոցիացման արդեն պատրաստ պայմանագիրը ստորագրելու չսպառված պահով սպառնալով ՄՄ ուղղությամբ: Բա:

Մի հարցնող լինի՝ ուր էլ թղթերով մտնենք, մեր տունը մենք չպե՞տք է կարգավորենք, ո՞վ է գալու մեր փոխարեն՝ մեր օլիգարխներին զսպի, կամ չափավորի մեր անհագ պաշտոնյաների ախորժակն ու հասարակ մարդու ձեռքից փուշ հանի: Մե՞նք չպիտի անենք՝ անկախ նրանից, թե ո՞ր միության հետ ի՞նչ թուղթ կստորագրենք: Արա՛քսը մնալու է իր տեղում, որպես սահման, բաղձալի սարն էլ՝ դիմացը, մեր դատարկվող սահմանամերձ գյուղերը ոտ չեն առնելու-փախչեն ուրիշ երկիր, սահմանամերձ Պառավաքար գյուղում ապրող հորեղբորս աղջիկն էլ էլի վախենալու է գյուղի ճանապարհից դուրս գալ ու այդ ճանապարհով գնալ մարզկենտրոն կամ հարեւան գյուղ՝ կենսական հարցերը լուծելու, քանի որ նույն կերպ ադրբեջանական դիրքերից էլի համը հանելու են՝ ՄՄ-ում լինենք, թե ԵՄ-ում:

Ուրեմն՝ ե՞րբ ձեռնամուխ կլինենք արմատապես մեր կյանքը փոխող մեծ ծրագրերի, երբ բյուջեն այնպիսին է, որ երկու օլիգարխ միանան՝ մեր երկրի բյուջեի չափ միջոց կարող են դնել սեղանին, եւ ինչպե՞ս թույլ տվեցինք այս վիճակը, ես չգիտեմ: Մեր լրատվամիջոցների ամենօրյա հետաքրքրությունները զանազան մազալու բաների վրա են, միայն թե մատները չդնեն ցավի վրա, ինչը ցույց է տալիս փոփոխություններ կատարելու հաստատակամության բացակայությունը (քանի որ մեր ԶԼՄ-ների գերակշիռ մասի տերերը իշխանությունից ստացած մեսիջներով են աշխատում), ու որ՝ երկար դեռ դոփելու ենք տեղում: Հենց ամեն օր մարդկանց զբաղեցնելու թեմաների արտանետումը լրատվամիջոցներով, զանազան շոուներ սարքելը, ուրա-նրա անկողնում ընթերցողին պահելու միտումը ցույց են տալիս, որ մեր խնդիրները երկար դեռեւս չեն լուծվելու: Երբ խնդիրները ցանկանում են լուծել՝ խոսում են դրանց մասին, երբ չեն ուզում, գտնում են խամաճիկ թեմաներ՝ շեղելու մարդկանց կուտակված խնդիրներից, այդ մասին բազմիցս ասել ենք:

Իսկ ծանծաղուտում որեւէ նավ երկար մնալ չի կարող, մնաց՝ ալիքը տալու է- ավերի:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշուապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Թեքեյան մշակութային միության համաժողովը տեղի կունենա Լոնդոնում նոյեմբերին

***Նոյեմբերի 8-ին եւ 9-ին Լոնդոնում տեղի է ունենալու Թեքեյան մշակութային միության (ԹՄՄ) միջազգային համաժողովը: Այդ առթիվ ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք «Արմինյն միրոր-սփեքթեյթր» (ԱՄՍ) շաբաթաթերթի հարցազրույցը ԹՄՄ-ի Լոնդոնի մասնաճյուղի ատենապետ դոկտ. Հրաչ Գույումճյանի հետ:***

**- Դոկտ. Գույումճյան, խնդրում ենք հակիրճ բնութագրել համաժողովի նախադրյալները:**

- ԹՄՄ-ն հիմնադրվեց 1947-ին, պատերազմական դժվար տարիներից անմիջապես հետո, մի խումբ հայ մտավորականների եւ գործարարների ջանքերով: Անցյալ տարի մենք նշեցինք Միության կազմավորման 65-ամյակը: 1947-ից ի վեր ոչ մի անգամ հնարավոր չէր եղել տարբեր երկրներում գործող մասնաճյուղերը ի մի բերել եւ քննարկել Միության հետագա գործունեությունը ներկայի հարափոփոխ աշխարհում: Լոնդոնը ընտրվեց որպես հարմարագույն վայր այդ հանդիպման համար:

**- Խնդրում ենք անդրադառնալ նաեւ ԹՄՄ-ի պատմությանը:**

- Ամեն ինչ սկսվեց Բեյրութում ազգային հոգսերով մտահոգ մի խումբ անձնավորությունների անխոնջ ջանքերով: Նրանց մեծամասնությունը այսօր, դժբախտաբար, մեզ հետ չէ: Հրաչ Սեդրակյան, Գերսամ Ահարոնյան, Բարունակ Թովմասյան, Համբարձում Բերբերյան, Հակոբ Դավիթյան, Հայկաշեն Ուզունյան եւ ուրիշներ, որոնք 1947-ին կազմեցին Միության հիմնադիր հանձնախումբը: Հետագայում Միությունը իր մասնաճյուղերը բացեց նաեւ սփյուռքի այլ երկրներում, որոնցում այժմ ճանաչված եւ մեծապես գնահատված հասարակական կազմակերպություն է: Ընդարձակման գործընթացը սկսեց Մերձավոր Արեւելքից, հետո տարածվեց դեպի Մ. Նահանգներ, Կանադա, ապա եվրոպական երկրներ եւ Հայաստան: Այսօր 12 երկրներում դրանք գործում են, եւ նրանց ներկայացուցիչները ներկա են գտնվելու այս համաժողովին:

ԹՄՄ-ն անկուսակցական, մշակութային կազմակերպություն է, որ կամուրջ է սփյուռքահայ տարբեր համայնքների ու նաեւ հայրենիքի միջեւ: Հիմնադիրների ազատական, ժողովրդավարական սկզբունքները այսօր էլ գործում են:

**- Լոնդոնը ընտրված է հավաքի անցկացման վայր: Ի՞նչ կարող եք ասել ԹՄՄ-ի Լոնդոնի մասնաճյուղի մասին:**

- Լոնդոնում ԹՄՄ-ն հիմնադրվեց 1975-ին շնորհիվ Հայկաշեն Ուզունյանի, Կարո Արեւյանի, Դավիթ Մսըրյանի, Անդրեաս Ծուլիկյանի, Կարպիս Եսայանի, Կարո Գրիգորյանի, Վարդան Ուզունյանի եւ ուրիշների նվիրատվական ջանքերի: Շատերը մեզ հետ չեն այլեւս: Բայց ուրիշներ՝ Վարդան Ուզունյանի նման, դեռեւս շարունակում են նշանակալի դերակատարություն ունենալ հատկապես Թեքեյան Տրաստում, որը հիմնադրվեց 1979-ին:

**- Կարո՞ղ եք մի երկու խոսքով ներկայացնել Թեքեյան Տրաստը:**

- Սկզբնական շրջանում Թեքեյան Տրաստը հիմնադրվեց ԹՄՄ-ի լոնդոնյան մասնաճյուղի կողմից՝ պրն Կարո Գրիգորյանի առատաձեռն նվիրատվությամբ, որպես այդ մասնաճյուղի կենտրոնատեղի, բայց Հայաստանի անկախությունից հետո ղեկավարությունը որոշեց այնտեղ ձեռք բերել մի նոր գլխավոր վարչական շենք: Այդպիսով Երեւանի նախկին կիսավարտ «Կռունկ» ռեստորանի շենքը հիմնական վերանորոգումից հետո դարձավ այսօրվա շքեղ «Թեքեյան կենտրոնը»:

**- Ի՞նչ է ակնկալվում համաժողովից:**

- Դժվար է սպասելիքները կանխորոշել: Մարդ պետք է համեստ լինի իր ակնկալիքները թվարկելիս: Այդուհանդերձ, տարբեր մասնաճյուղերից ներկայացուցիչների ժամանումը եւ քննարկումների նստելը ինքնին հատկանշական երեւույթ է: Գաղտնիք չէ, որ կուտակված հարցեր կան, եւ այս համաժողովը եզակի հնարավորություն է լինելու ոչ միայն լուծում գտնելու այդ հարցերին, այլեւ միասնական ջանքերով մշակելու նոր ծրագրեր, որոնք հարիր կլինեն 21-դ դարին: Հաշվի են առնվելու սփյուռքում եւ հայրենիքում առկա նոր հնարավորությունները:

**- Ի՞նչ կարող եք ասել անձամբ Ձեր դերակատարման մասին:**

- Արդեն նշեցի, որ համաժողովը վաղուց սպասված իրադարձություն էր: Կանադայում, Մ. Նահանգներում եւ Մերձավոր Արեւելքում շրջանային հավաքներ տեղի ունեցել էին, բայց հարմար ժամանակ չէր գտնվել բոլոր մասնաճյուղերի միասնական հավաքի համար, ինչը կարեւոր էր՝ հաշվի առնելով մեր առաջ ծառացած նոր մարտահրավերները: Իմ ներգրավվածությանը մեծապես նպաստեց այն փաստը, որ ժամանակ առ ժամանակ Բեյրութ այցելությունների ընթացքում հետաքրքրվում էի եւ ուսումնասիրում ԹՄՄ-ի կենտրոնական արխիվները: Վաղամեռիկ հորս դերակատարություններն էլ ինչպես ԹՄՄ-ում, այնպես էլ քույր կազմակերպություններում մեծապես ազդել են ինձ վրա: Այսօրվա ղեկավարներից շատերը հորս ուսանողներն են եղել: Առանց կառուցվածքային ներքին շերտերի խոր իմացության եւ ներկայի ղեկավարների հետ սերտ հարաբերությունների երեւի թե հնարավոր չէր լինի կազմակերպել նման ծավալի մի միջոցառում: Առիթից օգտվելով ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր արձագանքելով կոչին՝ սատար կանգնեցին իմ համեստ նախաձեռնությանը: Իրականում Լոնդոնի մասնաճյուղն է, որ արժանի է գովասանքի: Եվ նրան աջակցողները:

Թարգմ. Հ. Ծ.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

# ՔՐՈՆԻՄԵՏ բարեգործական հիմնադրամի եւ Տավուշի մարզի Կայան ավանի թիվ 1 հանրակրթական դպրոցի համագործակցության արդյունքները

**Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանից 200 մետր հեռավորությամբ տեղակայված Կայանը փոքր ավան է, ունի 306 բնակիչ: Շնորհիվ Կայան ավանի թիվ 1 դպրոցի տնօրենի, այդ դպրոց այսօր հաճախում են մոտ 140 աշակերտներ, որոնք գալիս են մոտակա համայնքներից: Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցում են բազմապիսի մրցույթների, խաղերի եւ օլիմպիադաների ողջ հանրապետության տարածքում:**





**Սրանք էին հիմնական դրդապատճառները, որ ՔՐՈՆԻՄԵՏ բարեգործական հիմնադրամը 2012թ սեպտեմբերին մշակեց հատուկ աջակցության ծրագիր եւ ձեռնամուխ եղավ դրա իրականացմանը: Դպրոցին կից խարխլված շենքում նախատեսվում էր բացել նախակրթարան, ուր պետք է հաճախեին մոտ 50-60 երեխա: Սակայն շենքն ուղղակի փլվում էր, եւ վտանգավոր էր երեխաներին նույնիսկ այդ շենքին մոտիկ թողնել: Մեր խորին համոզմամբ, այս շրջանում ուսումնական հաստատությունների պայմանների բարելավումը առնվազն ինչ-որ չափով կարող էր կանխել իրենց համայնքը լքելու մարդկանց մտադրությունից:**

**Հիմնանորոգման աշխատանքները բաժանվեցին երկու փուլի եւ մեկնարկեցին դեռ 2012 թվականին՝ տանիքի հիմնանորոգմամբ: 2013 թվականի մայիսին ՔՐՈՆԻՄԵՏ բարեգործական հիմնադրամը սկսեց եւ հոկտեմբերին ավարտեց նախակրթարանի ամբողջ շենքի հիմնական նորոգումը: Այս նախաձեռնությունը կյանքի կոչելու համար ներդրվեց մոտ 40 միլիոն ՀՀ դրամ:**

**Կարեւորելով կրթությանն օժանդակող ծրագրերի իրականացումը հատկապես սահմանամերձ շրջաններում՝ ՔՐՈՆԻՄԵՏ բարեգործական հիմնադրամի այս նախաձեռնությամբ երեխաների համար ստեղծվեցին իսկապես հարմարավետ եւ բարենպաստ պայմաններ ուսումը առավել արդյունավետ եւ հետաքրքրական դարձնելու համար:**

**ՔՐՈՆԻՄԵՏ բարեգործական հիմնադրամը ստեղծվել է 2011թ. հունիսին, հիմնադիրն է ՔՐՈՆԻՄԵՏ Մայնինգ գերմանական ընկերությունը:**

ՀՀ-ում «ՔՐՈՆԻՄԵՏ Մայնինգ ԲԸ»-ի ներկայացուցչություն

# Ներդրումները Հայաստանում նվազում են

*1-ին էջից*

**Արգենտինական ներդրումները հիմնականում կատարվել են օդային տրանսպորտի եւ գյուղատնտեսության ոլորտներում, իսկ կատարողը մեր հայրենակից Էդուարդո Էռնեկյանն է: 2009-ին նրա ներդրումները կազմել են 50 մլն դոլար, դրանից հետո մերթ ավելացել, մերթ նվազել, իսկ այս տարվա առաջին կեսին կազմել 76 մլն դոլար: Փաստորեն, այս պահի դրությամբ Հայաստանում ամենամեծ ներդրումներ իրականացնում է Արգենտինան՝ ի դեմս Էռնեկյանի եւ այդ ներդրումների ծավալներն ավելանում են: Հիշեցնենք, որ բացի իրական հատվածից, Էդուարդո Էռնեկյանը ներդրումներ է կատարում նաեւ շինարարության մեջ, արագ տեմպերով կառուցելով արտգործնախարարության եւ մի քանի այլ նախարարությունների նոր շենքային համալիրը:**

**Համեմատության համար նշենք, որ այս տարվա առաջին կեսին ամենից մեծ ներդրումներ Հայաստանում կատարել է Արգենտինան՝ վերոնշյալ 76 մլն դոլարով, ապա Ռուսաստանը՝ 38 մլն դոլար, Կանադան՝ 36 մլն դոլար, այնուհետեւ Կիպրոսը՝ 35 մլն դոլար, Ֆրանսիան՝ 28 մլն դոլար, Գերմանիան եւ Ֆինլանդիան՝ 12 մլն-ական դոլար: Վերոնշյալ երկրներից Հայաստանում ներդրումներն այս տարվա առաջին կեսին ավելացրել են միայն Արգենտինան, Կիպրոսը եւ Ֆինլանդիան: Մնացած բոլոր երկրներից ներդրումները նվազել են:**

**Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ մեր երկրի ներդրումային գրավչության բարձրացման խնդիր ունենք: Նման իրավիճակում հարկ է, որ կառավարությունը նպաստավոր պայմաններ ստեղծի հատկապես խոշոր ներդրումային ծրագրերի համար, ինչպիսիք են Դիլիջանի միջազգային դպրոցի 550 մլն դոլար ընդհանուր արժեքով ներդրումային ծրագիրը, «Զվարթնոց» օդանավակայանի ընդլայնման ծրագիրը: Մինչդեռ Դիլիջանի ներդրումային ծրագրին արտոնություններ տալու կառավարության նախագիծը բուռն հակազդեցության արժանացավ որոշ պատգամավորների կողմից, որոնք այլ պարագաներում կթմբկահարեին երկրի տնտեսության զարգացման, արտագաղթի կասեցման մասին: Իսկ նոր օդանավակայանի կառուցողին էլ մեր մի շարք ճարտարապետներ պարզապես խանգարում են դա անել, պահանջելով պահպանել օդանավակայանի հին շենքը եւ «այլ ներդնող գտնել», որ դա կանի: Դժվար է հասկացնել այդ մարդկանց, որ ներդնողների առատությունից Հայաստանը չի պայթում, ավելի շուտ հակառակը եւ գոնե եղածներին պետք չէ «խրտնեցնել»:**

## Շինդլերի ցուցակ

# 1915 թվի իսկական թուրք հերոսները

***Եթե Գերմանիան որոշեր Բեռլինի եւ այլ քաղաքների որոշ շրջաններ, փողոցներ, դպրոցներ եւ այլ հասարակական վայրեր կոչել Ադոլֆ Հիտլերի եւ նացիստական այլ «հերոսների» անուններով, ինչպե՞ս կարձագանքեին դրան գերմանացիները, հրեաները: Իմ կարծիքով՝ խիստ բացասական, համարելով անընդունելի եւ վիրավորական:***

***Բայց նման երեւույթ գոյություն ունի Թուրքիայում, որտեղ մի շարք թաղամասեր, փողոցներ, դպրոցներ եւ այլ վայրեր կրում են Թալեաթ փաշայի եւ «Իթթիհատ վե Թերաքի» կուսակցության մյուս «հերոսների» անունները, որոնք ոչ միայն ծրագրեցին, այլեւ իրագործեցին հայերի ցեղասպանությունը եւ պատճառ դարձան Օսմանյան կայսրության անկմանը:***

***Վերջին հաշվարկներով՝ Թալեաթ փաշայի անունով Թուրքիայում կան 8 շրջան կամ թաղամաս, 38 փողոց կամ զբոսայգի, 7 դպրոց, 6 շենք եւ 2 մզկիթ: 1922 թվին իր սպանությունից հետո նրան թաղել էին Բեռլինում, բայց նրա աճյունը հետագայում՝ 1943-ին, նացիստները փոխադրել են Ստամբուլ՝ թուրքերին սիրաշահելու նպատակով, եւ զինվորական պատիվներով վերաթաղվել է Ստամբուլի «Հավերժական ազատության բլուր» գերեզմանատանը: Մեկ ուրիշ վատահամբավ չարագործի՝ Էնվեր փաշայի աճյունը 1996-ին Տաջիկստանից տեղափոխվել էր Թուրքիա եւ դարձյալ պատշաճ զինվորական պատիվներով թաղվել Թալեաթի կողքին: Արարողությանը ներկա էին գտնվել Թուրքիայի այդ ժամանակվա նախագահ Սուլեյման Դեմիրելը եւ այլ պաշտոնական անձինք:***

***Նման մարդկանց հերոսացումը, 1915 թվի ժխտումը սոսկ պետական քաղաքականությո՞ւն է, թե՞ հասարակության կողմից ընդունված երեւույթ:***



*Հալեպի, ապա Կոնիայի կառավարիչ Ջելալ բեյը*



*Լիսի քաղաքապետ Հուսեյին Նեսիմի բեյը*



*Քյոթահիայի կառավարիչ Ֆայիք Ալի (Օզանսոյ) բեյը*

Անկասկած, հասարակության որոշ շրջանակներ մասնակցել էին «Իթթիհատի» առաջնորդների իրագործած ցեղասպանությանը, զրկելով հայերին հայրենիքից եւ տիրելով նրանց հարստությանը: Բայց, ի հակադրություն այս մասնակցության, հասարակության եւ կառավարության մեջ կային որոշ թուրքեր եւ քրդեր, որոնք մերժեցին մասնակցել ցեղասպանությանը եւ թալանին: Թուրքիայում նրանց մասին չեն խոսում, ոչ էլ՝ գրում:

Ներկա հոդվածում մի քանի օրինակներ ենք բերելու՝ հաստատելու այն փաստը, որ այդ մարդիկ ի գին իրենց կյանքի եւ դիրքի, հրաժարվեցին կատարել իրենց ղեկավարների կարգադրությունները եւ փրկեցին որոշակի թվով հայերի:

**Ջելալ բեյը** Կոնիայի կառավարիչն էր: Նա հստակ գիտեր, թե ինչ է սպասվում հայերին դեպի Դեր Զոր բռնագաղթի ճանապարհին: Նախկինում եղել էր Հալեպի կառավարիչ եւ տեսել էր այնտեղի բռնությունները: Նա փորձել էր բացատրել «Իթթիհատի» առաջնորդներին, որ Անատոլիայում կամ Հալեպում հայերի կողմից ապստամբության փորձեր չկան եւ զանգվածային բռնագաղթը այդ վայրերից արդարացված չի կարող լինել: Բայց նրա ենթականերից մեկը Մարաշում ստեղծեց մի կացություն՝ ձերբակալելով մի քանի մարաշահայերի, որպեսզի դիմադրություն հրահրի վերջիններիս շրջանում:

Ջելալ բեյին ազատեցին Հալեպում իր զբաղեցրած պաշտոնից եւ տեղափոխեցին Կոնիա: Այնտեղ նա հրաժարվեց կատարել հայերին բռնագաղթի ենթարկելու Ստամբուլից եկած հրամանները եւ նույնիսկ պաշտպանեց մի խումբ հայերի, որոնք այլ շրջաններից Կոնիա էին հասել: Մինչեւ իր այդ պաշտոնից էլ ազատելու հրամանը (1915-ի հոկտեմբերին), նրան հաջողվել էր փրկել հազարավոր հայերի: Այդ մասին նա գրել է իր հուշերում. «Ես նման եմ մի մարդու, որը նստած է գետի ափին՝ առանց որեւէ հնարավորության փրկելու որեւէ մեկին: Արյունը հոսում էր՝ գետն ի վար տանելով իր հետ հազարավոր անմեղ երեխաների, անբասիր ծերունիների եւ անօգնական կանանց: Ում որ կարող էի փրկել, ես փրկեցի, մնացյալները գետն ի վար գնացին անվերադարձ»:

**Հասան Մազհար բեյը** Անկարայի կառավարիչն էր: Նա պաշտպանեց տեղի հայերին՝ հրաժարվելով կատարել տեղահանության հրամանները՝ հայտարարելով. «Ես վալի (կառավարիչ) եմ եւ ոչ թե բանդիտ: Չեմ կարող անել դա: Թող ուրիշ մեկը գա, նստի իմ աթոռին եւ կատարի այդ հրամանները»: Նրան իր պաշտոնից հեռացրին 1915 թվի օգոստոսին:

Ֆայիք Ալի (Օզանսոյ) բեյը Քյոթահիայի կառավարիչն էր: Նա եւս հրաժարվեց կատարել Ստամբուլից եկած կարգադրությունները: Ընդհակառակը՝ հրամայեց լավ վերաբերվել այլ շրջաններից Քյոթահիա ապաստանած հայերին: Նրան շուտով Ստամբուլ կանչեցին՝ բացատրություններ տալու եւ հասկանալու, որ պարտավոր է ենթարկվել կարգադրություններին: Իր բացակայությունից օգտվելով Քյոթահիայի ոստիկանապետ Քեմալ բեյը սպառնաց հայերին, ասելով, որ տեղահանությունից ազատվելու համար նրանք պետք է կրոնափոխ լինեն: Հայերը համաձայնեցին մահմեդական դառնալ: Երբ Ֆայիք Ալի բեյը վերադարձավ, զայրացավ եւ ոստիկանապետին ազատեց պաշտոնից: Ապա հայերին ասաց, որ ազատ են կրկին դավանափոխ լինելու: Բացի մեկ հոգուց՝ հայերը որոշեցին քրիստոնյա մնալ:

Ֆայիք Ալի բեյի եղբայրը՝ **Սուլեյման Նազիֆ** բեյը ազդեցիկ անձնավորություն եւ ճանաչված պոետ էր: Նա եղբորը խորհուրդ էր տվել չմասնակցել բարբարոսությանը եւ չարատավորել ընտանիքի անունը: Զարմանալիորեն Ֆայիք Ալիին չհեռացրին իր պաշտոնից՝ հակառակ իր ներկայացրած հրաժարականներին: Նա շարունակեց պաշտպանել հայերին, բացի այն մեկը, որ նախընտրել էր մահմեդական դառնալ: Նրան աքսորեցին:

**Մուսթաֆա բեյը** (Ազիզօղլուն) Մալաթիայի շրջանային կառավարիչն էր: Չնայած նա չկարողացավ կանխել բռնագաղթը, նրան այդուհանդերձ հաջողվեց մի քանի հայերի թաքցնել իր սեփական տանը: Նրան սպանեց իր որդին՝ «Իթթիհատ վե Թերաքի» կուսակցության մոլեռանդ ու եռանդուն անդամը, «գյավուրներին (անհավատներին) հող տանելու» համար: Անհնազանդ այլ անձնավորությունների շարքում կարելի է հիշել Քասթեմոնի կառավարիչ **Ռեշիտ փաշային**, Էրզրումի կառավարիչ՝ **Թահսին բեյին**, Բասրայի կառավարիչ **Ֆերիտ բեյին** եւ **Յոզղատի** շրջանային կառավարիչ **Մեհմեդ Ջեմալ բեյին**: Այս պաշտոնյաները ազատվեցին իրենց պաշտոններից եւ փոխարինվեցին առավել հնազանդ քաղծառայողներով, որոնք ի կատար ածեցին հայերին բնաջնջելու գազանային ծրագրերը:

Չգովաբանված այս հերոսներից ամենաողբերգական ճակատագիրը վերապահված էր Դիարբեքիրի մոտ գտնվող Լիս քաղաքի քաղաքապետ Հուսեյին Նեսիմի բեյին: Մինչ Դիարբեքիրի կառավարիչ Ռեշիտ բեյը անողոքաբար բնաջնջում էր հայերին հենց իր քաղաքի սահմանների մոտակայքում, Հուսեյին Նեսիմին պաշտպանում էր Լիսի 5980-հոգանոց հայկական համայնքին: Հավանաբար տեղեկանալով այդ մասին, Ռեշիտը իր մոտ Դիարբեքիր է կանչում նրան, իբր հանդիպման, բայց կարգադրում է, որ ճանապարհին իր չերքեզ պահակներից մեկը՝ Հարունը, սպանի նրան: 1915 թվի հունիսի 15-ին Հարունը սպանում է Հուսեյինին եւ դիակը գցում փոսի մեջ: Այդ օրվանից սպանության վայրը կոչվում է «Թուրբե-Ի-Քայմաքամ», այսինքն՝ քաղաքապետի դամբարան: Թուրքական աղբյուրներում սպանությունը վերագրվում է հայերին:

Ասում են՝ պատմությունը կրկնվում է: Ճակատագրի հեգնանքով 1993-ի հոկտեմբերին թուրքական բանակը հարձակվում է Լիսի վրա՝ քուրդ ապստամբներին ոչնչացնելու նպատակով: Փոխարենը նրանք ամբողջ քաղաքն են հրդեհում եւ սպանում անմեղ բնակիչներին: Դեպքը դառնում է առաջին դատական գործը, որ քրդերը հարուցում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, որն էլ պարտադրում է Թուրքիային 2,5 միլիոն ֆունտ փոխհատուցում վճարել: Բայց, միեւնույն ժամանակ, մի քանի հարուստ քուրդ գործարարներ սպանվում են այդ ժամանակվա Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերի կարգադրությամբ:

Զոհերից մեկը Բեհչետ Չանթուրքն էր, որի մայրը հայ որբուհի էր, ողջ մնացած Լիսի 1915-ի կոտորածներից:

Կառավարիչ Ռեշիտի հրամանով մի շարք այլ կառավարական պաշտոնյաներ եւս ազատվեցին աշխատանքից եւ սպանվեցին Դիարբեքիրի շրջանում՝ աքսորի հրամանները չկատարելու համար: Նրանց թվում էին Չերմըքի քաղաքապետ **Մեհմեդ Համդի բեյը**, Սավուրի քաղաքապետ **Մեհմեդ Ալի բեյը**, Սիլիվանի քաղաքապետ Իբրահիմ Հաքքի բեյը, Մերդինի իրավահաջորդ քաղաքապետներ **Հիլմի բեյը** եւ **Շեֆիք բեյը**: Նույն բախտին արժանացավ նաեւ նախ Միդյաթի, ապա ամբողջովին հայերով բնակեցված Դերիկի քաղաքապետ **Նուրի բեյը**: Վերջինիս սպանությունը դարձյալ վերագրվեց հայ ապստամբներին, եւ Դերիկի բոլոր տղամարդկանց սպանեցին, իսկ կանանց եւ երեխաներին աքսորեցին:

Այս խիզախ մարդկանց անունները պատմության գրքերում չեն նշված: Նշվելու դեպքում էլ բնութագրված են, թուրքական տեսանկյունից, որպես «դավաճաններ»: Մինչ պետությունը եւ ամբոխը զբաղված էին ի գործ դնելու զազրելի ոճրագործությունը, այս մարդիկ, վտանգի ենթարկելով իրենց կյանքը, մերժեցին մասնակից դառնալ ցեղասպանական արշավին՝ իրենց խղճի դեմ չմեղանչելու համար: Փոքրաթիվ այս առաքինի մարդիկ, շարքային թուրքերի եւ քուրդերի որոշակի խմբի հետ, մարտահրավեր նետեցին կառավարությանը եւ պաշտպանեցին հայերին: Նրանց կարելի է համարել իսկական հերոսներ: Նաեւ «Շինդլերի ցուցակի» կամ «Ռուանդա հյուրանոցի» կերպարների թուրք ներկայացուցիչներ:

Թուրքիայի քաղաքացիները այսօր երկու տարբերակ ունեն հիշելու իրենց հերոս նախնիներին: Նրանք որպես հերոս պետք է ընտրեն կա՛մ զանգվածային սպանություններ, թալան եւ «մարդկության դեմ գործած հանցագործություններ» կատարողներին, կա՛մ էլ առաքինի, մաքուր խղճի տեր մարդկանց, ովքեր փորձեցին կանխել այդ հանցագործությունները: Ճանաչելով նրանց, այդ իսկական հերոսներին, թուրքերը գուցե կարողանան ձերբազատվել արդեն չորս սերունդ ձգվող իրենց ժխտողական պատմության կապանքներից եւ սկսել առերեսվել 1915-ի իրականության հետ:

**ՐԱՖՖԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
**Տորոնտո, Կանադա**

### Օգտագործված գրականություն

*1. Թունչայ Օփչըն, «Ermenilere Kol Kanat Gerdiler» («Նրանք պաշտպանեցին հայերին»), Yeni Aktuel, 2007 թ. համար 142:*

*2. Աիշէ Հուր, «1915 Ermeni soykiriminda kotular ve iyiler» («Լավերն ու վատերը 1915 թվի Հայոց ցեղասպանությունում»), «Ռադիկալ» թերթ, ապրիլ 29, 2013թ.:*

*3. Շեյմուս Դիկեն, «Kaymakam Ermeniydi, Oldurduler» («Քաղաքապետը հայ էր, սպանեցին»), Բիանետ, ապրիլ 23, 2011 թ.:*

*4. Օրհան Չենգիզ, «1915: Heroes and Murderers» («1915 թ.: Հերոսներ եւ ոճրագործներ»), «Ջիհան նյուզ» գործակալություն, նոյ. 2, 2012 թ.:*

**Թարգմանեց**
**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

# Մոսկվայում՝ հոգուս Իլհամ Ալիեւի

Մոսկվայի քաղաքային դատարանը բավարարել է ՌԴ մամուլի վերահսկողության գործակալության հայցը՝ «Ռոսբալթ» գործակալության արտոնագիրը վաղաժամկետ դադարեցնելու մասին: Պատճառը գործակալության նյութերում «հայհոյախոսությունների առկայությունն է»:

Ավելի վաղ գործակալությունը «Ռոսբալթ»-ին նույն պատճառով գրավոր դիտողություն եւ զգուշացում էր արել: «Ռոսբալթ» գործակալությունը հիմնադրվել է 1997թ.-ին՝ Ադրբեջանի ՊԱԿ-ի նախկին նախագահ Վագիֆ Հուսեյնովի կողմից, որը 1992-ին Բաքվում ձերբակալվել էր «պետական դավաճանության» մեղադրանքով, դատապարտվել եւ ներման արժանանալուց հետո վտարանդվել Ռուսաստանի Դաշնություն:

Ադրբեջանական լրատվամիջոցները, հաղորդելով «Ռոսբալթ»-ի արտոնագիրը վաղաժամկետ դադարեցնելու՝ Մոսկվայի քաղաքային դատարանի վճռի մասին, ակնարկում են, որ «դա չէր կարող տեղի ունենալ առանց Կրեմլի իմացության»:

Խնդրին անդրադարձել է ՌԴ նախագահի մամլո խոսնակ Դմիտրի Պեսկովը: Նրա ասելով, «քանի որ այդ որոշումն ընդունվել է դատարանի կողմից», ապա ինքը «իրավունք չունի որեւէ մեկնաբանություն անելու»: Պեսկովը միաժամանակ ընդգծել է, թե «կոռեկտ չէ հարցը ներկայացնել այնպես, որ պետությունը ԶԼՄ-ի վրա ճնշում է գործադրում»: ՌԴ նախագահի մամլո խոսնակը ավելացրել է, որ «կան վճիռը բողոքարկելու մեխանիզմներ, եթե տվյալ դեպքում այդ մասին կարող է խոսք լինել, բայց եթե օրենքը նման հնարավորություն ընձեռում է, ապա բոլոր մեխանիզմները կարող են գործի դրվել»:

«Ռոսբալթ»-ի գլխավոր խմբագիր Նիկոլայ Ուլյանովը, հղում անելով գործով իրենց փաստաբանին, ասել է, որ իրենց «անհագստացրել է դատավորի պահվածքը, որին չի հետաքրքրել գործակալության տեսակետը»: Ուլյանովի գնահատմամբ՝ «դատական նիստն ընթացել բավական միակողմանի, դատարանը լսել է մամուլի վերահսկողության գործակալության տեսակետը եւ կայացրել վճիռ»:

Գործակալությունը մտադիր է մեկամսյա ժամկետում բողոքարկել Մոսկվայի քաղաքային դատարանի վճիռը, իսկ մինչ այդ «շարունակում է աշխատել սովորական ռեժիմով»: «Ռոսբալթ»-ը համարվում է ՌԴ առաջատար 5 գործակալություններից մեկը, գրասենյակներ ունի Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում եւ բազմաթիվ ներկայացուցչություններ մոտ եւ հեռավոր արտերկրում: «Ռոսբալթ»-ի տնօրենների խորհրդի նախագահը Վագիֆ Հուսեյնովն է:

Դատելով կատարվածի հանդեպ ադրբեջանական լրատվամիջոցների վատ քողարկվող հաճույքից, Վագիֆ Հուսեյնովի գլխավորած լրատվական-վերլուծական հաստատության արտոնագիրը կասեցնելու մասին Մոսկվայի քաղաքային դատարանի վճիռը Բաքվում իշխող վարչախմբին լիովին ձեռնտու է:

Ադրբեջանի նախագահական «ընտրություններին» նախորդած շրջանում, երբ պաշտոնական Բաքվի քարոզչամեքենան տարփողում էր «Կրեմլի հովանավորությամբ Իլհամ Ալիեւի դեմ ծրագրվող խարդավանքի» թեման, որպես «կազմակերպիչներից մեկը» հիշատակվել էր նաեւ Վագիֆ Հուսեյնովի անունը:

Իրավիճակը հատկապես սրվել էր, երբ նույն օրերին Մոսկվայում վաճառքի էր հանվել Հուսեյնովի «օրագրությունը», որտեղ խիստ աննպաստ գնահատականներ կային Հեյդար Ալիեւի հասցեին: Հեղինակը, որ 1989-91թ.թ. զբաղեցրել է Ադր. ԽՍՀ ՊԱԿ-ի նախագահի պաշտոնը, մասնավորապես զարգացրել է այն տեսակետը, որ 1990թ. Բաքվի հունվարյան դեպքերի անդրկուլիսային ռեժիսոր է հանդիսացել Հեյդար Ալիեւը, որի «հմուտ ձեռքերն էին կառավարում Ադրբեջանի ժողովրդական ճակատի խամաճիկներին»:

Հուսեյնովը կասկածել է, որ Հեյդար Ալիեւը Մոսկվայից բարեհաջող Նախիջեւան է տեղափոխվել հատուկ ծառայությունների կողմից «մինչեւ վերջին մանրամասնությունները ճշգրտված ծրագրի շնորհիվ»: Փաստացի, Ադր. ԽՍՀ ՊԱԿ-ի նախկին նախագահը հրապարակայնացրել էր, որ Հեյդար Ալիեւը Մոսկվայից Ադրբեջան է տեղափոխվել ԽՍՀՄ ՊԱԿ-ի հովանավորությամբ: Հուսեյնովի «օրագրությունից» հատվածներ տպագրվել են ադրբեջանական ընդդիմադիր թերթերում՝ նախագահական «ընտրությունների» քարոզարշավի օրերին:

Դժվար է ասել, որ «Ռոսբալթ»-ի արտոնագիրը վաղաժամկետ դադարեցնելու մասին Մոսկվայի քաղաքային դատարանի վճիռը կայացվել է գործով Ադրբեջանի «իշխանությունների կարծիքը հաշվի առնելու» վերաբերմունքի շրջանակներում, կամ էլ Իլհամ Ալիեւի «նախաձեռնությունն է դեր խաղացել»:

Բայց որ «Ռոսբալթ»-ի դեմ կայացված դատական վճիռը լիովին համապատասխանում է Վագիֆ Հուսեյնովի դեմ ինչ-որ քայլեր ձեռնարկելու՝ Իլհամ Ալիեւի ցանկություններին, այստեղ երկու կարծիք լինել չի կարող: Ադրբեջանում իշխող վարչախմբի ձեւավորման գաղտնիքների բացահայտումը, որ իրեն թույլ է տվել անել Վագիֆ Հուսեյնովը, հավանաբար ՌԴ իշխանությունների համար նույնպես ոչ ցանկալի է:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# Գլխաշորով պատգամավորներ Թուրքիայի խորհրդարանում



Թուրքիայում կառավարող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության 4 կին պատգամավորներ վերջին 14 տարում առաջին անգամ խորհրդարանի նիստերի դահլիճ են մտել գլխաշորով, հաղորդում է Hurriyet թերթը:

Այդ քայլը զայրացրել է ընդդիմության ներկայացուցիչներին, որոնք կառավարող կուսակցությանը մեղադրել են ամբոխավարության մեջ, իսկ գլխաշոր կապած պատգամավորներին՝ կանանց իրավունքները ընդհանուր առմամբ քամահրելու մեջ: Ընդդիմադիրներն իրենց գործընկերներին մասնավորապես հիշեցրել են, որ նրանք չպաշտպանեցին «չափազանց բաց» հագուստի համար վերջերս աշխատանքից ազատված հեռուստահաղորդավարուհուն:

Թուրքիայի պետական հիմնարկներում հիջաբ կրելը թույլատրվեց ընդամենը մեկ ամիս առաջ: Նախաձեռնության հեղինակները իսլամիստներն են՝ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորությամբ:

Աշխարհիկ ուժեղ ավանդույթներ ունեցող Թուրքիայում կանանց հիջաբ կրելը եւ իսլամիզմի մյուս հրապարակային դրսեւորումները հատկապես ցավոտ թեմա են: Կառավարող կուսակցության ընդդիմախոսներից շատերը հիջաբ կրելու արգելքի վերացումը համարում են եւս մեկ քայլ Թուրքիայի իսլամականացման ճանապարհին:

Էրդողանը եւ նրա կուսակիցները մերժում են այդ տեսակետը՝ հայտարարելով, թե իրենք հանդես են գալիս այն մարդկանց կյանքի «նորմալացման» օգտին, ովքեր ձգտում են կատարել բոլոր կրոնական ծեսերը:

ԳԱՂՏՆԱԶԵՐԾՈՒՄ

# Սնոուդենը գերմանացիներին կպատմի Մերկելի լրտեսման մանրամասնությունները

**Ամերիկյան հատուկ ծառայությունների նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենը պատրաստակամություն է հայտնել Գերմանիայի դատախազության եւ պատգամավորներին պատմելու կանցլեր Անգելա Մերկելի հեռախոսազրույցների գաղտնալսման մանրամասնությունները; Այդ մասին հայտարարել է «Կանաչներ» կուսակցությունից Բունդեսթագի պատգամավոր Հանս-Քրիստիան Շտրոբելեն:**



**Ռոյթեր գործակալության տվյալներով՝ Շտրոբելեն Մոսկվայում Սնոուդենի հետ հանդիպում է ունեցել հինգշաբթի օրը: Հանդիպումից հետո քաղաքական գործիչը մեջբերել է ամերիկացու այն խոսքերը, թե ինքը «շատ բան գիտի» եւ կարող է Գերմանիա գալ վկայական ցուցմունքներ տալու, քանի որ Մերկելի լրտեսումն իրականացրած ամերիկյան ԱԱԳ-ն հրաժարվում է համագործակցել գերմանական կողմի հետ:**

**Նոյեմբերի 1-ին Շտրոբելեն լրատվամիջոցներին պատմել է Սնոուդենի հետ կայացած հանդիպման որոշ մանրամասնություններ, ինչպես նաեւ հրապարակել է Գերմանիայի կառավարությանը Սնոուդենի հասցեագրած նամակը:**

**74-ամյա Շտրոբելեն հատուկ ծառայությունների աշխատանքին հետեւող խորհրդարանական հանձնախմբի անդամ է: Սնոուդենի հետ նրա հանդիպման նախօրեին Վաշինգտոնում ԱՄՆ-ի եւ Գերմանիայի ներկայացուցիչները քննարկել էին Մերկելի բջջային հեռախոսի գաղտնալսման հետ կապված սկանդալը, սակայն ամերիկացիների դիրքորոշումը չէր գոհացրել գերմանական կողմին:**

**Գաղտնալսման հարցը նոյեմբերի 18-ին քննարկվելու է Բունդեսթագում, եւ ընդդիմությունը, որի շարքերում է Շտրոբելեի կուսակցությունը, մտադիր է հասնել հրապարակային քննության անցկացմանը, նշում է Ռոյթերը:**

**Շտրոբելեն, իր իսկ խոսքերի համաձայն, Սնոուդենին հավաստիացրել է, որ նա կարող է Գերմանիայի խորհրդարանի համար վկայական ցուցմունքներ տալ նաեւ Ռուսաստանի տարածքում: Սակայն Ռուսաստանում ամերիկացուն ապաստան տրամադրվել էր այն պայմանով, որ նա ձեռնպահ կմնա ԱՄՆ-ին վնաս հասցնող գործողություններից: Դա ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի պահանջն էր:**

**Սնոուդենը Ռուսաստանում ժամանակավոր ապաստան ստացավ 2013-ի օգոստոսին, Մոսկվայի «Շերեմետեւո» օդանավակայանի տարանցիկ գոտում գրեթե մեկ ամիս մնալուց հետո: Ամերիկացու փաստաբան Անատոլի Կուչերենայի խոսքերով՝ նա արդեն աշխատանք է գտել եւ աջակցելու է ոչ պետական համացանցային նախագծերից մեկին:**

**Ամերիկյան հատուկ ծառայությունների գործունեության վերաբերյալ ԶԼՄ-ներին գաղտնի փաստաթղթեր փոխանցած Սնոուդենի նկատմամբ ԱՄՆ-ում քրեական գործ է հարուցված լրտեսության եւ պետական սեփականության հափշտակման մեղադրանքներով:**

# Մոսկվան 2 մլն դոլար կհատկացնի Սիրիայի քիմիական զենքի ոչնչացմանը

**Մոսկովյան «Կոմերսանտ» թերթը նոյեմբերի 1-ի համարում տեղեկացնում է, որ Ռուսաստանը մոտ 2 մլն դոլար կհատկացնի Սիրիայի քիմիական զենքի ոչնչացմանը: Տասնյակ ուրիշ երկրներ նույնպես պատրաստ են տրամադրելու համանման գումարներ:**

**Ռուսաստանը թեեւ հրաժարվում է սեփական տարածք բերել սիրիացիների քիմիական զինանոցները, բայց պատրաստվում է Սիրիա ուղարկել ՌԴ ԶՈՒ ճառագայթային եւ կենսաբանական պաշտպանության զորքերի զինծառայողների, շարունակում է թերթը: Վերջիններս իրենց արտասահմանցի գործընկերների հետ կապահովեն ոչնչացման գործընթացի անվտանգությունը: Բացի դրանից, Ռուսաստանը կարող է փոխադրամիջոց տրամադրել սիրիական զինանոցներն արտասահման զինափորձարան տեղափոխելու համար:**

**Սիրիայի քիմիական զենքի ոչնչացման գործողության երկրորդ փուլը, ամենայն հավանականությամբ, կիրականացվի Ալբանիայի տարածքում: Ավելի վաղ Թուրքիայի, Հորդանանի եւ Նորվեգիայի իշխանությունները մերժումով էին պատասխանել զինանոցներն իրենց երկրներում ոչնչացնելու առաջարկությանը:**

**Առաջին փուլը, այսինքն քիմիական զենքի արտադրության սարքավորումների օգտահանումը, ավարտվել է ժամանակին՝ նախքան նոյեմբերի 1-ը: Այդ մասին «Ազգը» հաղորդեց երեկվա համարում: Քիմիական զենքի արգելման կազմակերպության գործադիր խորհուրդը մինչեւ նոյեմբերի 15-ը պետք է հաստատի երկրորդ փուլի գործողությունների ծրագիրը, որով նախատեսվում է ոչնչացնել Սիրիայում կուտակված 1,3 տոննա թունանյութեր:**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

# Թարգմանական գրականության նոր կենտրոն

Վերջին տարիներին Ստեփանակերտում գործող «Ոգի-Նաիրի» գեղարվեստի կենտրոնի հովանու ներքո հայ ընթերցողի սեղանին են դրվել մի շարք թարգմանական գրքեր: Նախաձեռնողը բանաստեղծ, թարգմանիչ, հրատարակիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Հրանտ Ալեքսանյանն է, ով նաեւ «Գեղարմ» գրական-թարգմանական հանդեսի գլխավոր խմբագիրն է: 2002 թվականից լույս տեսնող այդ պարբերականի գլխավոր ուղղություններից մեկը հենց թարգմանական գրականությունն է, որը հղնթացս այնքան խորացավ, որ 2010 թվականից արդեն մատենաշարով թարգմանաբար հրատարակվեցին առանձին գրքեր, որոնց նկատմամբ հայկական ընթերցողական դաշտում պահանջարկը մեծ է: «Ոգի-Նաիրին» դանդաղ վերածվում է թարգմանական կենտրոնի՝ իր ցանկալի բաղադրիչներով:

Հրանտ Ալեքսանյանը զրույցի ժամանակ ասաց, որ ի սկզբանե նախանշված էր ներկայացնել հատկապես ժամանակակից արտասահմանյան գրականությունը եւ առաջնահերթությունը տալ փոքրաթիվ ազգերի գրականությանը, որը հայ ընթերցողական շրջանակներին ընդհանրապես ծանոթ չէ: Մեր այն հարցին, թե թարգմանիչների հարցն ինչպես է լուծվում, Հ. Ալեքսանյանը պատասխանեց. «Այսպես կոչված «փոքր գրականություններից» (ասենք՝ իսլանդական, դանիական, սլովենական եւ այլն) թարգմանությունները կատարվում են միջնորդավորված կերպով՝ ռուսերենից եւ անգլերենից: «Փոքր» լեզուներից թարգմանիչներ հայկական դաշտում դեռեւս չկան: Հանդեսը ձգտում է պատուհան բացել դեպի այդ ազգերի հոգեւոր ոլորտը»:

Հանդեսի գործունեությանը զուգընթաց ձեւավորվել է թարգմանիչների մի խումբ, ովքեր այժմ կանոնավորապես զբաղվում են թարգմանությամբ (հիմնականում անգլերենից, ռուսերենից եւ գերմաներենից) եւ գործեր տրամադրում «Գեղարմ»-ին : Ի դեպ, հանդեսի յուրահատկությունն այն է, որ եռալեզու է. հիմնական տեղ զբաղեցնող հայերեն գրականությունից բացի անգլերենով ներկայացվում է հայ ժամանակակից պոեզիան օտարալեզու ընթերցողին: Անգլերեն թարգմանության շնորհիվ ակտիվ գրական շրջանառության մեջ են մտել հայ ժամանակակից բանաստեղծների բազմաթիվ ստեղծագործություններ՝ առանց աշխարհագրական սահմանափակումների, ընդգրկելով համահայկական դաշտը: Օրինակ, վերջին՝ 52-րդ համարում հրապարակվել են Հովհաննես Գրիգորյանի եւ Աշոտ Ավդալյանի բանաստեղծություններից: Իսկ ռուսերեն բաժնում սովորաբար ներկայացվում է հայ ժամանակակից արձակը:



Թարգմանական զարգացումների արդյունքներից մեկն եղավ այն, որ տրամադրվածություն ստեղծվեց ունենալ մատենաշար, որպեսզի առանձին գրքերով ներկայացվեն այն հեղինակները, ովքեր հայտնվել են հանդեսի հրատարակիչների ուշադրության կենտրոնում: Երկար ժամանակ ծրագիրը մնում էր փափագելի, եւ միայն 2010-ից հնարավոր եղավ այն իրականացնել:

Առաջին «ծիծեռնակը» «Թատրախաղեր արեւմտյան գրականությունից» գիրքն էր (թարգմանիչ՝ Վարուժ Սուրենյան), որտեղ ընդգրկված են 10 դրամատուրգների գործեր. շատերը հայերենով հրատարակվեցին առաջին անգամ. Աուգուստ Ստրինդբերգ, Լուիջի Պիրանդելլո, Ջոն Սինգ, Հարոլդ Փինթեր, Արթուր Միլլեր եւ այլք: Երկրորդ գիրքը Ի. Բրոդսկու «Տեղատարափի շաչյունն» է (թարգմանիչներ՝ Հրանտ Ալեքսանյան, Ներսես Աթաբեկյան, Ավագ Եփրեմյան, Շանթ Մկրտչյան): Մատենաշարն առավել արդյունավետ է եղել 2012 թվականին. լույս տեսան Սերգեյ Դովլաթովի «Միայնակների երթը» պատմվածքների ժողովածուն (թարգմանիչ՝ Ներսես Աթաբեկյան), «Սիրիուսի որնգահարները», որտեղ ընդգրկված են ռուսական գրականության արծաթե դարի երեք պոետներ՝ Վելիմիր Խլեբնիկով, Նիկոլայ Գումիլյով եւ Վլադիսլավ Խոդասեւիչ: Այդ հեղինակներին խորհրդային տարիներին հիմնականում չէին հրատարակում. եռանուն անթոլոգիայի թարգմանիչներն են Հրանտ Ալեքսանյանը եւ Արմեն Հովհաննիսյանը: Նշված գրքերին հետեւեցին Վառլամ Շալամովի «Կոլիմյան պատմվածքները» (թարգմանիչներ՝ Գ. Բախտամյան, Կ. Գաբրիելյան, Ա. Հովհաննիսյան, Ն. Աթաբեկյան): Այս հանրահայտ պատումների համար հիմք են հանդիսացել կենսագրական փաստերը: Գրքում ճշմարտացի եւ հոգեբանական խտացումներով պատկերված է խորհրդային շրջանի գուլագյան իրականությունը՝ դժոխային եւ մարդկային տոկունության ցնցող երեւույթների գեղարվեստական վառ արտացոլմամբ: Ապա հրատարակվեցին Յուրի Լոտմանի «Միֆ. Անուն. Մշակույթ»-ը, որը մշակութաբանական-գրականագիտական հոդվածների ժողովածու է (թարգմանիչներ՝ Վ. Եփրեմյան, Հ. Բեյլերյան, Թ. Տոնոյան, Թոնդրակ եւ այլք), Միխայիլ Բախտինի «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» (թարգմանիչ՝ Վ. Ֆերեշեթյան) եւ այլ գրքեր:

2013-ին նույն թափը պահել հնարավոր չեղավ. վերջերս լույս է տեսել բոսնիացի գրող Ժարկո Միլենիչի «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը» հեքիաթ-վիպակը (թարգմանիչ՝ Գայանե Բախտամյան): Առավելապես պատանիներին հասցեագրված այս գիրքը ուղերձ է բոլոր նրանց, ովքեր կյանքն ընկալում են գեղեցիկի ու արդարության սահմաններում եւ չեն կորցրել երազելու ունակությունը: Առաջիկայում նախատեսված է հրատարակել Պավել Ֆլորենսկու արվեստաբանական հայտնի աշխատություններից մեկը՝ «Իկոնոստաս» խորագրով, Վասիլի Գրոսմանի «Կյանք եւ ճակատագիր» երկհատոր վեպը, նաեւ՝ ռուս կոնցեպտուալ պոեզիայի անթոլոգիա:

Հարկ է նշել, որ տարեկան կտրվածքով հովանավորվում են հանդեսի միայն տպագրական ծախսերը, իսկ գրքերի հրատարակության համար փնտրվում են հովանավորներ, համապատասխան աղբյուրներ, որոնց տրամադրած միջոցներով հնարավոր է դառնում հրատարակել ծրագրված բազմաթիվ գրքերի միայն մի մասը:

Մեր զրույցի ընթացքում Հ. Ալեքսանյանը շեշտեց, որ վաղուց ժամանակն է, որպեսզի հայոց իրականության մեջ ստեղծվի որեւէ հաստատություն, որը լրջորեն կզբաղվի հայ գրականությունը արտերկրում հրատարակելու գործով՝ իրեն վերապահված միջոցներով ու մասնագետներով: «Որպեսզի քո գրականությունը քարոզվի, դու պիտի միջոցներ հատկացնես, դրանք հնարավոր է գտնել, միայն թե գործի պրոֆեսիոնալ մոտեցման սկզբունքը»,- նշեց հանդեսի եւ մատենաշարի խմբագիրը՝ բերելով Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Խորվաթիայի, Կատալոնիայի եւ այլ երկրների օրինակը, ուր մեծ միջոցներ են ներդրվում սեփական գրականությունը քարոզելու, աշխարհին ներկայացնելու համար:

Մեր այն հարցին, թե կոմերցիոն առումով ծրագիրն ինչ է շահում, Հ. Ալեքսանյանը պատասխանեց, որ սա ավելի շատ լուսավորչական, գրաքարոզչական ծրագիր է. մեր ժամանակներում ընթերցողներ կան, բայց գրքերի վաճառքը գտնվում է ցածր մակարդակի վրա:

ՆՎԱՐԴ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Ստեփանակերտ

# Արտաքուստ, զողտրիկ հանդիսութիւն նուիրուած Լեւոն Միրիջանեանին



**Հոկտեմբերի 30-ին Խ. Աբովեանի անուան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ նոր եւ նորագոյն գրականութեան ամբիոնը եւ «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնը կազմակերպել էին հանդիսութիւն՝ նուիրուած բանաստեղծ Լեւոն Միրիջանեանի 80 ամեակին:**

**Բացման խօսքում ամբիոնի վարիչ, պրոֆ. Սուրէն Դանիէլեանն ընդգծեց, որ Լեւոն Միրիջանեանն իր հեւետից լուսագիծ է թողել եւ նրա ստեղծագործութիւնը դարձել է երիտասարդութեան, գրական հասարակայնութեան անբաժան մասնիկը: Լ. Միրիջանեանը սիրում էր կրկնել, որ բարին քիչ է, չարը շատ: Եւ նա գնաց՝ հաւատալով, որ անդին՝ այն աշխարհում, կը հանդիպի բարուն: Այսօր՝ մահից գրեթէ տասը տարի անց, կարող ենք հաստատել՝ Լ. Միրիջանեանը եւ բարին մեզ հետ են:**

**Լ. Միրիջանեանը վանեցի էր, եւ ոչ սովորական վանեցի: Նրա հայրը ֆիդայի է եղել, ումից էլ ժառանգել է արդարը հաստատելու պատրանքը, պատրանք՝ որովհետեւ միշտ չէ, որ բարին յաղթում է: Նա ծովի սէր ունէր, եւ երբ առաջին անգամ եղաւ Վանում, Վանի հիւսիսային հատուածից՝ Արճէշից տեսաւ իր սիրած ծովը, նրա ժողովածուները այլեւս ծովից այն կողմ չանցան, ծովառաս էին՝ «Դէպի ծով», «Առագաստ» եւ այլն:**

**Պրոֆ. Ս. Դանիէլեանը շնորհակալութիւն յայտնեց օրուայ հիւր, ՀՀԿ փոխնախագահ, Ազգային ժողովի հանրապետական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանին, ով դասարկաձեռն չէր եկել. ուսանողութեանը բերել էր Լ. Միրիջանեանի՝ վերջերս լոյս տեսած «Լուսաստղ» ժողովածուն, նաեւ օրինակներ նախորդ գրքերից:**

**«Այսօր, այս հանդիպման շնորհիւ, ապրում ենք ստեղծագործական այն նոյն տարերքը, ինչ ապրել է Լ. Միրիջանեանը:**

**Ցած չի բերի ինձ ոչ մի ուժ ամբարիշտ:**

***Հոգիս՝ անշէջ***
***Աստղերի՜ մէջ***
***Այժմ եւ մի՜շտ...:***

**Լեւոն Միրիջանեանի տողերն են: Հաւատում ենք՝ «այժմ»ը այսօրն է, «միշտ»ը՝ յաւերժութիւնը, ինչը յուշում է, որ նա արդէն հայ բանաստեղծութեան ծիրից ներս է»,- եզրափակեց պրոֆ. Սուրէն Դանիէլեանը:**

**ՀՀ ԳԱԱ ակադեմիայի թղթակից անդամ, Համալսարանի հայ հին եւ միջնադարեան գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ալիսա Դոլուխանեանն իր հանգամանալից ելոյթում ասաց, որ բախտ է ունեցել անձամբ ճանաչելու Լեւոն Միրիջանեանին: Նա յատկապէս գնահատեց այն հանգամանքը, որ Գրականութեան ինստիտուտում եղած տարիներին բանաստեղծը տարուած էր հայ հին եւ միջնադարեան գրականութեամբ, նա լաւ գիտէր գրաբար, եւ կազմել է հայ քնարերգութեան ժողովածու, որ ձգւում է անտիկ դարաշրջանից եւ հասնում 9-րդ դ.: Լեւոն Միրիջանեանը շատ է շրջագայել, ինչն, անխօս, ընդլայնել է նրա մտահորիզոնը: Նա տիրապետում էր ռուսերէնին, եւ բազմաթիւ արժէքաւոր թարգմանութիւններ է կատարել, այդ թւում՝ Ալ. Բլոկի «Տասներկուսը»: Պրոֆ. Դոլուխանեանը խօսեց նաեւ Լ. Միրիջանեանի ստեղծած «Վասպուրական» Միութեան մասին, անդրադարձաւ «Երգի հովիւը» պոէմին: Իսկ գրողի ամենամեծ առաքելութիւնը համարեց մեծ հայրենասէր լինելը:**

**Հայ նոր եւ նորագոյն գրականութեան ամբիոնի դոցենտ Արմինէ Մուրադեանն իր զեկոյցում ծանրացաւ հեղինակի կեանքի եւ ստեղծագործութեան բնութագրի վրայ: Իսկ «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի մեթոդիստ, բանասիրական գիտութիւնների թեկնածու Քնարիկ Աբրահամեանը քննութեան առաւ «Երգի հովիւը» պոէմը, որ դեռեւս 1969 թ.ին Բէյրութում արժանացել է Թէքէեան մշակութային միութեան մրցանակի:**



**Հանդիսութեանը ներկայ էր եւ խօսք ասաց Լեւոն Միրիջանեանի անուան թիւ 155 դպրոցի տնօրէն Լուսինէ Դանիէլեանը, իսկ իբրեւ ապացոյց, որ այստեղ նաեւ միրիջանեանական գրականութեան շարունակականութեան փորձեր են արւում, աշակերտներից մէկը կարդաց իր գրած բանաստեղծութիւնը:**

**Սահմանադրական դատարանի մամուլի քարտուղար Յովհաննէս Պապիկեանը խօսեց Լ. Միրիջանեանի եւ Ու. Սարոյեանի ամերիկեան հանդիպման ու «Երգի հովիւը» պոէմի սարոյեանական գնահատութեան մասին: Նա շնորհակալութիւն յայտնեց, որ իրեն չցուցադրող Լ. Միրիջանեանը շարունակում է ապրել գրականութիւնը գնահատողների մէջ:**

**Հանդիպման աւարտին շնորհակալական խօսքով հանդէս եկաւ Գալուստ Սահակեանը: Ընդգծելով Լ. Միրիջանեանի համեստ էութիւնը՝ նա պատմեց «Ով սիրուն, սիրուն» երգի հետ կապուած մի հետաքրքրական դրուագ: Եւ իբրեւ շարունակութիւն ընդգծեց, որ Լ. Միրիջանեանը գաղափարներ էր տալիս, որոնք շրջում էին հայ հասարակութեան մէջ: Նա ասաց, որ այս հանդիսութիւնը բանաստեղծին դուր կը գար, որովհետեւ հենց այսպիսի լսարանի սիրահար էր: Պետական մակարդակով միջոցառում կազմակերպելը Գ. Սահակեանի համար այնքան էլ բարդութիւն չի ներկայացնում, բայց նա գտնում է, որ նման միջոցառումները աւելի տպաւորիչ ու հիմնաւոր են դարձնում հեղինակին մօտեցումը:**

**Գեղարուեստական յայտագրով հանդէս եկան բանասիրական բաժանմունքի երրորդ եւ չորրորդ լսարանի ուսանողները, իսկ յայտնի «Ով սիրուն, սիրուն» երգը կատարեցին հայ նոր եւ նորագոյն գրականութեան ամբիոնի մասնագէտ Լիլիթ Ալեքսանեանն ու բանասիրական բաժանմունքի մագիստրանտ Շուշան Յարութիւնեանը:**

**Հանդիպումը եզրափակեց բանասիրական բաժանմունքի դեկան Եուրի Դաւթեանը:**

«Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի լրատուութիւն

# Արոնյանը կրկին հատեց 2800-ի սահմանագիծը

## *Լիլիթ Մկրտչյանի վարկանիշը ամենացածրն է վերջին 5 տարում*



Բիլբաոյում անցկացված շախմատի «Մեծ սաղավարտի» մրցաշարում ունեցած հաջող ելույթների շնորհիվ Լեւոն Արոնյանն իր վարկանիշն ավելացրեց 6-ով ու կրկին հայտնվեց 2800-ից բարձր վարկանիշ ունեցող շախմատիստների ցանկում: ՖԻԴԵ-ի դասակարգման նոր աղյուսակում Լեւոնը 2801 վարկանիշով կրկին տեղ զբաղեցրեց 2-րդ հորիզոնականում՝ շրջանցելով Վլադիմիր Կրամնիկին, որը վարկանիշը նվազեցրել է 3-ով (2793): Իսկ դասակարգման ցուցակի առաջատար Մագնուս Կառլսենը պահպանել է վարկանիշը՝ 2870:

Լավագույն տասնյակում են նաեւ Հիկարու Նակամուրան (2786) Ալեքսանդր Գրիշչուկը (2785), Ֆաբիանո Կարուանան (2782), Բորիս Գելֆանդը (2777), Վիշվանաթան Անանդը (2775), Վեսելին Թոփալովը (2774) եւ Շահրիյար Մամեդյարովը (2757):

100 լավագույն շախմատիստների ցանկում ընդգրկված են եւս 5 հայ շախմատիստներ: Սերգեյ Մովսիսյանը վարկանիշն ավելացրել է 4-ով (2700) եւ 51-րդ տեղից բարձրացել է 49-րդ հորիզոնական: Վլադիմիր Հակոբյանի վարկանիշը նվազել է 3-ով (2681), որի պատճառով նա 59-րդ տեղից նահանջել է 63-րդ հորիզոնական: Գաբրիել Սարգսյանը 68-րդ տեղից նահանջել է 71-րդ հորիզոնական, թեեւ պահպանել է 2676 վարկանիշը: Մեկ հորիզոնականով առաջադիմել է 2660 վարկանիշը պահպանած Տիգրան Պետրոսյանը՝ զբաղեցնելով 89-րդ տեղը: Իսկ ֆրանսահայ Տիգրան Ղարամյանը 2658 վարկանիշով ընդգրկվել է 100 լավագույնների ցանկում ու զբաղեցնում է 91-րդ տեղը:

Կանանց վարկանիշային ցուցակի առաջատարը Հուդիթ Պոլգարն է (2689): Լավագույն տասնյակում են նաեւ Հոու Յիֆանը (2629), Համպի Կոներուն (2618), Աննա Մուզիչուկը (2566), Ջժաո Սյուեն (2565), Նանա Ձագնիձեն (2556), Կատերինա Լահնոն (2542), Բելա Խոթենաշվիլին (2524), Նադեժդա Կոսինցեւան (2523) եւ Պիա Կրամլինգը (2520):

Էլինա Դանիելյանը 2457 վարկանիշով 31-րդ տեղում է: Նախորդ ամսվա համեմատ նա վարկանիշը նվազեցրել է 14-ով ու 4 հորիզոնականով նահանջել է: Իր ցուցանիշը զգալիորեն վատթարացրել է նաեւ Լիլիթ Մկրտչյանը, որը 2447 վարկանիշով 40-րդ տեղում է: Նա վարկանիշը նվազեցրել է 22-ով ու նահանջել է 11 հորիզոնականով: Ներկայիս վարկանիշը ամենացածրն է Լիլիթի համար վերջին 5 տարիներին: Ավելի ցածր վարկանիշ (2443) նա ունեցել էր 2008-ի հոկտեմբերին:

Մինչեւ 20 տարեկան 100 ուժեղագույն շախմատիստների ցանկում Կարեն Գրիգորյանը 2604 վարկանիշով 17-րդն է: Նախորդ ամսվա համեմատ նա պահպանել է վարկանիշը, սակայն մեկ տեղով նահանջել է: Սամվել Տեր-Սահակյանը 2568 վարկանիշով 25-րդն է, Հովհաննես Գաբուզյանը (2531) 40-րդ տեղում է, Ռոբերտ Աղասարյանը (2477) 71-րդն է:

ՖԻԴԵ-ի անդամ երկրների ցանկում Հայաստանն իր միջին վարկանիշով (2658) եզրափակում է լավագույն հնգյակը: Առջեւում են Ռուսաստանը (2743), Ուկրաինան (2704), Չինաստանը (2673) եւ Ֆրանսիան (2666): Լավագույն տասնյակում են նաեւ Հունգարիան (2654), ԱՄՆ-ը (2648), Հնդկաստանը (2644), Հոլանդիան (2637) եւ Իսրայելը (2632): Ադրբեջանը (2617) 14-րդ տեղում է, Վրաստանը (2592) 17-րդն է:

# Միջին վարկանիշով շախմատի ՀՀ հավաքականները լավագույն հնգյակում են




Նոյեմբերի 7-18-ը Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում անցկացվելիք շախմատի Եվրոպայի թիմային առաջնության պարգեւները կվիճարկեն տղամարդկանց 37 եւ կանանց 31 հավաքականներ: Այս օրերին Հայաստանի հավաքականի անդամները Ծաղկաձորում շարունակում են նախապատրաստությունը մրցաշարին:

Հայաստանի տղամարդկանց հավաքականը Վարշավայում հանդես կգա այսպիսի կազմով. Լեւոն Արոնյան, Սերգեյ Մովսիսյան, Վլադիմիր Հակոբյան, Գաբրիել Սարգսյան, Տիգրան Պետրոսյան: Մեր ընտրանին իր միջին վարկանիշով (2713) զիջում է միայն Ռուսաստանի հավաքականին (2745), որի կազմում հայտավորված են Ալեքսանդր Գրիշչուկը, Պյոտր Սվիդլերը, Ալեքսանդր Մորոզեւիչը, Եվգենի Տոմաշեւսկին ու Դմիտրի Անդրեյկինը:

Հայաստանի կանանց հավաքականի պատիվը կպաշտպանեն Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը, Լիլիթ Գալոյանը, Մարիա Կուրսովան ու Աննա Հայրապետյանը: ՀՀ հավաքականն իր միջին վարկանիշով (2395) մասնակիցների մեջ 5-րդն է: Ավելի բարձր վարկանիշ ունեն Ուկրաինան (2495), Վրաստանը (2492), Ռուսաստանը (2481) եւ Լեհաստանը (2406):

**ԲՌՆՑՔԱՄԱՐՏ**

# Դավիթ Ավանեսյանի մրցակիցը Կառլոս Էրերան է

**Պյատիգորսկում բնակվող եւ Ռուսաստանի դրոշի ներքո հանդես եկող հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Դավիթ Ավանեսյանը նոյեմբերի 4-ին Կրասնոդարում կմենամարտի 32-ամյա արգենտինացի Կառլոս Լեոնարդո Էրերայի հետ: Այդ մենամարտը կկայանա պրոֆեսիոնալ բռնցքամարտի երեկոյի շրջանակներում, որի գլխավոր մրցամարտը 44-ամյա ռուսաստանցի Օլեգ Մասկաեւի հանդիպումն է 40-ամյա բրիտանացի Դենի Վիլյամսի հետ:**

**25-ամյա Դավիթ Ավանեսյանը Էրերայի հետ մենամարտում կվիճարկի կիսամիջինքաշային կարգում WBC Baltic-ի չեմպիոնական գոտին: Դավիթը պրոֆեսիոնալ ռինգում 17 մենամարտերից 15-ը շահել է, մեկն ավարտել է ոչ-ոքի, կրել է մեկ պարտություն: Վերջին մենամարտը նա անցկացրել է օգոստոսի 30-ին՝ 8-ռաունդանոց մենամարտի 5-րդ ռաունդում հաղթելով Ֆարիզ Կազիմովին: Կառլոս Էրերան 29 մենամարտերից 24-ում հաղթել է, 5-ում՝ պարտվել:**

# «Ոսկե գնդակի» 23 հավակնորդները

**ՖԻՖԱ-ն հրապարակել է աշխարհի լավագույն ֆուտբոլիստի համար սահմանած «Ոսկե գնդակ» մրցանակի 23 հավակնորդների ցանկը: Մրցանակի տերը կորոշվի ազգային հավաքականների գլխավոր մարզիչների եւ ավագների միջեւ անցկացվող հարցման արդյունքներով: Մրցանակաբաշխությունը տեղի կունենա հունվարի 13-ին Ցյուրիխում:**

**Հավակնորդների թվում են Լիոնել Մեսին (Արգենտինա), Տիագո Սիլվան ու Նեյմարը (երկուսն էլ՝ Բրազիլիա), Գարեթ Բեյլը (Ուելս), Լուիս Սուարեսը եւ Էդինսոն Կավանին (երկուսն էլ՝ Ուրուգվայ), Ռադամել Ֆալկաոն (Կոլումբիա), Էդեն Ազարը (Բելգիա), Զլատան Իբրահիմովիչը (Շվեդիա), Անդրես Ինիեստան եւ Խավին (Իսպանիա), Ֆիլիպ Լամը, Բաստիան Շվայնշտայգերը, Մեսութ Օզիլը, Թոմաս Մյուլլերն ու Մանուել Նոյերը (բոլորն էլ՝ Գերմանիա), Ռոբերտ Լեւանդովսկին (Լեհաստան), Անդրեա Պիռլոն (Իտալիա), Ֆրանկ Ռիբերին (Ֆրանսիա), Ռոբին վան Պերսին, Արիել Ռոբենը (երկուսն էլ՝ Հոլանդիա), Քրիստիանու Ռոնալդուն (Պորտուգալիա) եւ Յայա Տուրեն (Կոտ դ'Իվուար):**

# Պելեն հատուկ մրցանակների է արժանացել



**Ֆուտբոլի արքա Պելեն Գինեսի ռեկորդների գրքում գրանցված իր նվաճումների համար հատուկ մրցանակի է արժանացել, որը նրան հանձնվել է Լոնդոնում: Բացի այդ, 73-ամյա նախկին ֆուտբոլիստը ստացել է «Ֆուտբոլի լեգենդ» մրցանակը:**

**Գինեսի ռեկորդների գրքում Պելեն գրանցված է որպես ֆուտբոլի պատմության լավագույն ռմբարկու, որը 1283 գոլ է խփել, ինչպես նաեւ աշխարհի չեմպիոնի տիտղոսին 3 անգամ արժանացած միակ ֆուտբոլիստ:**

## «Բարսելոնը» մտադիր է հրավիրել Լեւանդովսկուն

**«Բարսելոնը» թիմի կազմն ուժեղացնելու նպատակով մտադիր է հրավիրել Դորտմունդի «Բորուսիայի» լեհ հարձակվող Ռոբերտ Լեւանդովսկուն: Վերջինս ցանկություն ուներ տեղափոխվելու Մյունխենի «Բավարիա»: Նույնիսկ տեղեկատվություն էր տարածվել, թե Լեւանդովսկին նախնական պայմանագիր է կնքել «Բավարիայի» հետ: Սակայն հետագայում այդ լուրը հերքվեց ֆուտբոլիստի եւ «Բավարիայի» կողմից:**

## «Ռոման» նոր ռեկորդ սահմանեց

**Իտալիայի առաջնության 10-րդ տուրում 1-0 հաշվով հաղթելով «Կեւոյին», «Ռոման» 10-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց եւ նոր ռեկորդ սահմանեց: Իտալիայի առաջնություններում դեռեւս ոչ մի թիմի չէր հաջողվել մեկնարկային 10 հանդիպումներն էլ շահել: Նախկին ռեկորդը պատկանում էր «Յուվենտուսին», որը մեկնարկից 9 հաղթանակ էր տոնել:**

**«Ռոման» 30 միավորով վստահորեն գլխավորում է աղյուսակը: 25-ական միավոր ունեն «Նապոլին» եւ «Յուվենտուսը»:**

## Ռոնալդինյոն «Բեշիքթաշից» 9 մլն եվրո է պահանջել

**Թուրքական «Բեշիքթաշը» հետաքրքրվում է բրազիլական «Ատլետիկո Մինեյրո» թիմի կիսապաշտպան Ռոնալդինյոյով: Վերջինիս պայմանագիրն ակումբի հետ ավարտվում է դեկտեմբերի 31-ին: Սակայն 33-ամյա ֆուտբոլիստը թուրքական ակումբի համար բավական մեծ գումար է պահանջում՝ տարեկան 9 մլն եվրո աշխատավարձ: Այդ պատճառով էլ «Բեշիքթաշի» ղեկավարությունը բրազիլացու տեղափոխությունը Թուրքիա առայժմ 50 տոկոս է գնահատում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Հայրենիք եւ հայրանուն

## Ինչպես է կատարվում ռուսաց լեզվին՝ ՌԴ պետական լեզվին վերաբերող օրենքը

***ՌԴ Պետդումայի Դաշնության խորհրդի փոխնախագահ Վյաչեսլավ Շտիրովը մոսկովյան «Լիտերատուրնայա գազետա» թերթում տպված ծավալուն հոդվածում հետաքրքրական դատողություններ է անում պետական լեզվի պաշտպանությունն ուժեղացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Իսկ մե՞նք:***

Հեղինակը հենց սկզբից բերում է ռուսական «Աերոֆլոտ» պետական ավիաընկերության օրինակը, որի տոմսերի վրա ռուսերեն ոչ մի բառ չկա: Ամեն ինչ անգլերեն է, ասես ուղեւորները ԱՄՆ-



ում են կամ Մեծ Բրիտանիայում:

Նույնը վերաբերում է «Ուրալսկիե ավիալինիի» ավիաընկերությանը, որը թեեւ մասնավոր է, բայց՝ ռուսական, կենտրոնակայանը Եկատերինբուրգում է: Այդ ընկերության Մոսկվա-Իրկուտսկ չվերթի տոմսերի վրա նույնպես ռուսերեն ոչ մի բառ չկա:

Ասում են, թե այդպես է ստեղծված համակարգչային ծրագիրը, որպեսզի հնարավոր լինի տոմսեր տպավորել համացանցում: Եվ քանի որ ընկերությունները ունեն նաեւ միջազգային չվերթեր, որտեղ ընդունված է անգլերենը, ուստի ավելի հեշտ է ունենալ մեկ ծրագիր:

Հոդվածագիրը կտրականապես դեմ է սրան: ՌԴ-ում պետական լեզուն, ըստ սահմանադրության, ռուսերենն է: Ուստի ժամանակն է վարչական եւ տնտեսական պատժամիջոցներով նման ընկերությունների ղեկավարներին ստիպելու իրենց խոշոր եկամուտների մի մասը ծախսել այնպիսի ծրագրերի ստեղծման վրա, որոնք կհամապատասխանեին 2005-ից գործող օրենքին, ըստ որի ՌԴ պետական լեզուն ռուսերենն է:

Վերջին տասնամյակներում ռուսաց լեզվի վրա կատարվող «զանգվածային հարձակումը» անհնար է չնկատել: Շտիրովը ընդգծում է, որ դրա դեմ համապատասխան միջոցներ չձեռնարկելը ռազմավարական առումով վտանգավոր է:

Լեզուն ազգային ինքնագիտակցության որոշիչ գործոն է, յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի հիմքը, որի վրա սերունդները ստեղծում են իրենց ոգեղենության տունը: Հիմքը քանդելու դեպքում տունը կփլուզվի: Զարմանալի չէ, որ շատ երկրներ ունեն ազգային լեզվի պաշտպանության պետական հստակ քաղաքականություն:

Դա հատկապես կոշտ է Ֆրանսիայում: Վերջին կես դարում, մի շարք հատուկ հրամանագրերից բացի, այնտեղ ընդունվել է երկու օրենք ֆրանսերենի կիրառության մասին: 1975-ին ընդունված առաջին օրենքի նպատակն էր լեզուն պաշտպանել առեւտրային, աշխատանքային եւ գովազդային ոլորտներում հայտնվող անգլո-ամերիկյան բառերից: Օրենքն արգելում էր օգտագործել օտար եզրույթ, եթե կար դրա ֆրանսերեն նմանակը, պետական օժանդակություն էր նախատեսում օրենքի դրույթները կատարող կառույցների համար եւ օժանդակությունից զրկում էր օրինախախտներին: Օրինակ՝ փարիզյան խորտկարաններից մեկի տերը 3500 ֆրանկ տուգանք վճարեց, քանի որ ճաշացանկում օգտագործել էր «համբուրգեր» եւ «սոֆթ դրինք» օտարաբանությունները: Մեկ ուրիշ ձեռնարկատեր խոշոր տուգանք վճարեց, քանի որ ԱՄՆ-ում գնած շապիկները վաճառել էր անգլերեն պիտակներով:

1975 թ. օրենքը որոշակի դեր խաղաց: Սակայն հեռուստատեսությունում եւ ռադիոյում անգլերեն բառերի գրոհը շարունակվում էր: Ֆրանսիայի հանրահայտ 300 քաղաքացիներ դիմեցին նախագահ Ֆրանսուա Միտերանին եւ պահանջեցին կանգնեցնել «համանգլիականությունը»: Լայն քննարկումներից հետո սահմանադրության մեջ կատարվեց ուղղում: 1992-ին այնտեղ ավելացրին, որ հանրապետության պետական լեզուն ֆրանսերենն է: 1994-ին ընդունվեց ֆրանսերենի կիրառությանը վերաբերող նոր օրենք, որը նախագծի հեղինակի՝ մշակույթի եւ ֆրանսախոսության նախարար Ժակ Տուբոնի անունով կոչվեց «Տուբոնի օրենք»:

1993 թ. ընդունված ՌԴ սահմանադրության մեջ համապատասխանաբար գրված է, որ ՌԴ պետական լեզուն ռուսերենն է: Ի դեպ, ռուսական կայսրության հիմնական պետական օրենքների 3-րդ հոդվածում նշված էր. «Ռուսերենը համապետական լեզու է եւ պարտադիր է բանակում, նավատորմում եւ բոլոր պետական ու հասարակական մարմիններում»:

Իսկ ի՞նչ է կատարվում այժմ: Հեղինակը բերում է Մոսկվայում եւ այլուր հայտնված բազմաթիվ օտարալեզու ցուցանակների օրինակներ՝ ընդգծելով, որ ցանկության դեպքում հնարավոր կլիներ գտնել դրանց ռուսերեն համարժեք բառերն ու բառակապակցությունները:

Յուրաքանչյուր կենդանի լեզու կատարում է փոխառություններ: Գիտնականները հաշվարկել են, որ, օրինակ, գերմաներենում դրանք տասնյակ հազարներ են, իսկ անգլերենի բառամթերքը կիսով չափ բաղկացած է փոխառյալ բառերից: Ռուսերենում դրանք անհամեմատ քիչ են՝ մոտ 10 տոկոս:

Վ.Գ. Բելինսկին գրել է. «Համարժեք ռուսերեն բառի գոյության դեպքում օտար բառ օգտագործելը նշանակում է վիրավորել թե՛ առողջ դատողությունը, թե՛ առողջ ճաշակը»:

Ներկայումս ռուսաստանյան ԶԼՄ-ներում, մանավանդ հեռուստատեսության եւ ռադիոյի եթերում առկա են բազմաթիվ անտեղի օտարաբանություններ: Դրանք հատկապես շատ են գովազդերում: Նույնիսկ գերհայրենասիրական «Զվեզդա» հեռուստաալիքով սփռվում է «Բրեյն-ռինգ» կոչվող հաղորդում: Իսկ ՌԴ կառավարության որոշ անդամներ միմյանց հետ ասես մրցում են օտարաբանությունների հարցում:

Հեղինակը ընդգծում է, որ (տվյալ դեպքում անգլո-ամերիկյան) լեզվական նախահարձակումը թուլացնում է ազգային մշակույթի արմատները, փոխում որեւէ ժողովրդի ավանդական կանոններն ու արժեքները: Օրինակ, ընդունված է ռուսներին դիմել անուն-հայրանունով: Բազմաթիվ երկրներում (այդ թվում՝ անգլիախոս) ռուսներին հասկանալի ընկալմամբ հայրանուն գոյություն չունի: Ջեկը 10 տարեկանում էլ, 70 տարեկանում էլ Ջեկ է: Սակայն շատ տգեղ է հնչում, երբ Ռուսաստանում երիտասարդ հեռուստահաղորդավարը տարեց մարդուն դիմում է միայն անունով: Մինչդեռ ռուսերենում (ինչպես եւ հայերենում) հայրանունը եւ հայրենիքը նույնարմատ բառեր են: Եթե մեկը դեն են նետում, մյուսը թուլանում է: Ահա թե ինչու Ֆրանսիայում մայրենի լեզվի պահպանումը լայն իմաստով համարում են պայքար հանուն ազգային անկախության:

**Պ. Ք.**

*(կրճատումներով)*

ԵՐԱԽՏԻՔ

# Հոգով ու կամքով ուժեղ ուսուցիչը



**Վերջերս լրացավ ԼՂՀ Շահումյանի շրջանի Ղարաչինարի միջնակարգ դպրոցի 123-րդ տարեդարձը: Տարեդարձի կապակցությամբ շնորհավորում եմ բոլոր նախկին ուսուցիչներին ու շրջանավարտներին, ի սրտե ցանկանում եմ բոլորին քաջառողջություն, երկար տարիների խաղաղ ու երջանիկ կյանք, ինչպես նաեւ հարազատ Շահումյանի շրջանի ազատագրումը ադրբեջանական յաթաղանից:**

**Ղարաչինարի հայկական միջնակարգ դպրոցում, Ղարաչինարի գիշերօթիկ դպրոցում եւ Ղարաչինարի ռուսական միջնակարգ դպրոցում, Մանասի Շենի 8-ամյա դպրոցում, Խրխափորի 8-ամյա դպրոցում եւ Գաղթուղի քառամյա դպրոցում միասին աշխատում էին 160 ուսուցիչներ: Սակայն այսօր վերոհիշյալ 160 ուսուցիչներից միայն Խրխափորի 8-ամյա դպրոցի տարրական դասարանի ուսուցիչ Վերա Իսակի Իվանյանն է ապրում Հայաստանում, Երեւանյան համեստ բնակարաններից մեկում:**

**Վերա Իվանյանը ծնվել է 1928 թ. նոյեմբերի 15-ին Շահումյանի շրջանի Ղարաչինար գյուղում: 1950-51 թթ. աշխատել է հարազատ Ղարաչինարի միջնակարգ դպրոցում որպես տարրական դասարանների ուսուցիչ: 1951-54 թթ. աշխատել է Գյուլիստանի 8-ամյա դպրոցում: 1954 թ. ամուսնացել է խրխափորեցի Վալոդյա Գրիգորյանի հետ եւ աշխատանքի անցել Խրխափորի 8-ամյա դպրոցում, որտեղ աշխատել է 1954-1992 թթ.: 1992 թ. հունիսի 13-ի չարաբաստիկ օրը թուրքերը դավադրաբար մտնում են Շահումյանի շրջան եւ զավթում են բոլոր գյուղերը, այդ թվում նաեւ Խրխափորը, որը տվել է 19 զոհ: Վերա Իվանյանը ամուսնու՝ Վոլոդյայի եւ երեխաների հետ մազապուրծ հասնում են Ուկրաինա, որտեղ ապրում են մինչեւ 1995 թ., այդ տարին ամուսինը՝ Վոլոդյան, 68 տարեկան հասակում սրտի կաթվածից մահանում է: Ամիսներ անց մահանում է նաեւ 70-ամյա ավագ եղբայր Գերասիմ Իվանյանը: 1 տարի անց ավտովթարից մահանում է նաեւ ավագ որդին 43 տարեկան հասակում:**

**Վերա Իվանյանն այդքան ողբերգություններից հետո ընտանիքի մյուս անդամներին հավաքում ու գալիս է Հայաստան:**

**Նա հոգով ու կամքով այնքան ուժեղ է, որ ապրում է միայնակ: Իհարկե, երեխաները ու թոռները հաճախակի հյուր են գնում նրան:**

**Խրխափորի 8-ամյա դպրոցն իր հերթին եղել է Ղարաչինարի միջնակարգ դպրոցի մասնաճյուղերից մեկը, այդ իսկ պատճառով էլ դպրոցներն ու ուսուցիչները հազար ու մի թելերով կապված են եղել միմյանց հետ: Վերա Իվանյանը հիշում է 3 ուսուցչի: Ղարաչինարի միջնակարգ դպրոցի բարձրագույն կրթությամբ առաջին ուսուցիչ Շարմաղ Սահակի Աբրահամյանին, որի ծննդյան 86-ամյա տարեդարձը լրացավ հոկտեմբերի 17-ին, նրան անվանում է «Աշխարհագրության գիտակ», այսինքն՝ ուսուցիչ, որ աշխարհագրության մասին գիտեր ամեն ինչ: 1961-1984 թթ. Խրխափորի 8-ամյա դպրոցի տնօրեն Ռուբեն Խաչատուրի Հովսեփյանին, նրան անվանում է մեծատառով մարդ: Եվ վերջում էլ հիշում է Միխայիլ Շատվերյանին, որը երկար տարիներ աշխատել է որպես Շահումյանի շրջանի ժողովրդական կրթության բաժնի վարիչ:**

**85-ամյակդ շնորհավոր, սիրելի՛ ուսուցիչ:**

**ՌՈՍՏԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
**Ղարաչինարցի**

# Նոյեմբերի 3-ին կլինի Արեգակի հիբրիդ խավարում

Նոյեմբերի 3-ին Գրինվիչի ժամանակով 12:47:36-ին տեղի կունենա հազվագյուտ երկնային երեւույթ՝ Արեգակի հիբրիդ խավարում:

Արեգակի խավարում տեղի է ունենում, երբ Լուսինն անցնում է Երկրի եւ Արեգակի միջով՝ մասամբ կամ ամբողջությամբ ծածկելով Արեգակի սկավառակը երկրային դիտորդի համար:

Լրիվ խավարման փուլում, երբ հեռավորությունների տատանումների պատճառով Լուսնի սկավառակն ավելի փոքր է լինում Արեգակի սկավառակից, դիտվում է օղակաձեւ խավարում: Հազվագյուտ դեպքերում լրիվ եւ օղակաձեւ խավարումները հաջորդում են միմյանց՝ կախված, թե երկրագնդի որ կետից են դիտվում, եւ այս դեպքում խավարումը կոչվում է հիբրիդ կամ օղակաձեւ-լրիվ:

Հայկական աստղագիտական ընկերության տեղեկացմամբ՝ նոյեմբերի 3-ի խավարման մասնակի փուլը կսկսվի Գրինվիչի ժամանակով ժամը 10:05-ին, իսկ լրիվ խավարումը՝ 11:05-ին:

Ժամը 12:47:36-ին Ատլանտյան օվկիանոսում՝ Փղոսկրի Ափից եւ Գանայից հարավ կլինի առավելագույն փուլը, որը կտեւի 1 րոպե 39 վայրկյան: Լրիվ խավարման առավելագույն շերտը կունենա 58 կմ լայնություն: Խավարումը կդիտվի Հյուսիսային Ամերիկայի արեւելյան ափերից մինչեւ Աֆրիկայի արեւելյան ափերը:

Հայաստանում խավարումը կդիտվի մասնակի: Սա Արեգակի 2013 թվականի երկու խավարումներից վերջինն է:

**Ի. Պ.**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 1.11.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: